

Չայներ

ինքնուած և ուսումնագրութեան  
բանագիր Յան Հայտեան

1901 - 1905

Ակադեմիա - լեզուական

Դոկտորական սեվաչ

# ԵԱՏԻ ԵԶԵՐ

(Հայակերպական գենրերից)

«ԿԱՆՉ»-1992



**ՌՈՒԲԵՆ ՄԵՎԱԿ**

**Զ Ա Յ Ա Ե Ր**

**«ԿԱՆՉ», ԵՐԵՎԱՆ 1992**

Հրատարակության պատրաստեց՝  
Ալեքսանդր Թոփչյանը

Զայներ: /Ժղվ./Կամ Բեղ. Ռ. Սևակ,  
2-222 Հրատ. պատրաստ. Ա. Թոփչյանը— Եր.: Կանչ, 1992. . .  
Գրքովկն ամրողությամբ պարունակում է Ռուբեն Սևակի աշակեր-  
տական ստեղծագործությունները՝ արձակ և չափածո:

2 4702080116  
791 (01)-92

ԳՄԴ. 84 Հ 1

ISBN 5-8079-0026-8

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Չափագանց դժվար և պատասխանատու գործ է հավաքել և տպագրել դասականների պատանեկության շրջանում գրված ստեղծագործությունները։ Դժվար, որովհետև, մեծ մասամբ, այդ տարիքում ստեղծված երկերը չեն պահպանվել, մանավանդ հայկական միջավայրում։ Հազվադեպ է, եթե Պուշկինի, Միցելիշի կամ Բայրոնի պես գրական պատանեկությունն օրգանապես տրամարանորեն գալիս ու միանում է հասուն շրջանին, կազմելով մեկ ամբողջություն։ Մեծ մասամբ, իրենք դասականները, պատանեկության իրենց փորձերը մեզնից թաքցնում են, լրջորեն խմբագրելով կամ ոչնչացնելով։ Խսկ եթե մեծ բանատեղի սկզբնական շրջանի ինքնագիրը կարողանում է հաղթահարել ժամանակը և բազմաբնույթ աղետներն ու անվճառ զալ հասնել մեզ, ապա բարոյական և ստեղծագործական դժվարություններ են կանգնում մեր՝ հրատարակողներին առջև։ որքանո՞վ խոհեմ է հիմա, եթե դրանց ստեղծողն անսասան հեղինակություն է, տպագրության հանձնել պատանության շրջանում արտաքերված գրական թոթովաճեցները։ Քեզ ոչինչ, եթե այդ տողերը լույս են տեսնում ակադեմիական հաստափոր հատորների վերջում, մանր տառերով շարված, որպես ծանրագրության մի բաժին, որպես հավելված, որը սովորաբար մասնագետներից զատ ուրիշ ոչ ոք չի կարդում։ Սակայն ուրիշ է, եթե հրաշրով պահպանված ձեռագրերը հատվածաբար հրապարակում են մեծ տպաքանակ ունեցող լրագրի էջերում, այնուհետև նոյն տեքստը մատուցում առանձին գրքովիք մեջ։

Մեր բոլոր դասականների համար դժվար է միանգամից և միատեսակ պատասխանել, բայց ինչ վերաբերում է Ռուբեն Սևակի «Զայներ» վերնագրված աշակերտական տետրակին, ապա պատասխանը մեկն է. այս տետրակն անպայման պետք էր հրապարակել։ Պատճառները մի բանիսն են։ Նախ, այս տողերը որքան ել պատանեկան անփորձության, գրական ուսումնառության հետքեր կրեն, սրանք թույ-

վանքներ չեն: Այս տողերը, արձակ, թե չափածո, անառարկելիորեն վկայում են իսկական, մեծ բանաստեղծի ծնունդը, և եթե հայում ես նեղինակի հետագա ամբողջ ստեղծածի համապատկերի մեջ, ապա առաջին հերթին նկատում ես ստեղծագործողի և մարդու նկարագրի անքակտելի ամբողջությունը: Գուցե որոշ հարցերում, պատմական կարևորագույն դեպքերի ճնշմանը, Ռուբեն Սևակը վերանայել է իր հայացքները մի շարք հարցերի հանդեպ: Սակայն բանաստեղծ-արարողի նկարագիրը, քաղաքացու տեսակը չի փոխվել, ավելի խորացել է գտնվածի մեջ Ա.Հ խորով, 17—20 տարեկանի տողերը մեր առջև բացում են բանաստեղծի մի ամբողջական նկարագիր, քանզի ոչ թե հակասում են մեզ արդեն ծանոթ ամբողջին, այլ լրացնում, ավելի հասկանալի դարձնում:

Բացի այդ, կա հետևյալ կարևոր հանգամանքը: «Զայներ» վերնագրված տետրակը, ըստ Էռիքյան բանաստեղծի առաջին հավաքածուն է: Ծիշտ է Ռուբեն Սևակն այն կազմել ու հավաքել է իր մեծ կանքի հախամուտին, սակայն հետագայում պահպանել է իր մնուս, մեր կարծիքով, ավելի կարևոր թղթերի հետ: Եվ եթե որպես բանաստեղծ ու որպես մտավորական նա առարկություններ ունենար իր պատահության շրջանի հետ, ապա հազիվ թե տետրակը մեզ հասներ, և եթե ինքը չի հրատարակել (կամ չի հասցել), ապա դա մեզ չի զրկում բարոյական իրավունքից այդ բանն անել այսօր, որը և կատարում ենք որպես հարգանքի տորք մեծ բանաստեղծի հիշատակին և ի լրումն նրա գրական ժառանգության:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՀՅԱՆ

հոկտեմբեր, 1992 թ.

## «ՀԻՍՈՒԽԻ ԿՅԱՆՔԸ» (ուսումնասիրություն)

### Մի քանի խոսք

Մարդ՝ գերազանցապես կրոնազգած էակ՝ անգամ մը որ կրոնքի մը փարեցավ, ալ շատ դժվար է խլել զայն իր գրկեն: Ամրապիրկ իր բազկաց մեջ այնքան բուռն կսեղմեն զայն, այնքան սերտիվ կհարի անոր, որ գրեթե կնույնանա անոր հետ: Այլևս իզո՞ւր կշանաս զայն փոխիլ, իզո՞ւր, ձևերը՝ գոյսները անուններն են՝ որ կփոխվին լոկ. ու խորը՝ միշտ մինևոյն կրոնքն է որ կհամատի կմնա: Ժամանակն է որ տակավ պիտի բարեփոխն զանի:

Ու ավելին՝ մարդ այնչափ կսիրե այդ կրոնքը, որ կամավ կկուրանա չտեսնելու համար տգեղություններն անոր. ու պարիսպ մը կրաքրացնե իր մտքին հետաքրքիր կույտերուն առաջ՝ չճանչնալու համար զայն որ այդ կրոնքը տաշեց ձևեց ու իր բազկաց մեջ Շետեց:— «Ասոված ստեղծեց զանի ու նետեց գրկիս վրա»: Ոչինչ կ'ուզե գիտնալ ասկեց դուրս, ասկեց տարրեր: Մարդ կամավ կփակն իր աշքերը ճշմարտությունը չտեսնելու համար:

Վայ անոր որ կրոնքին հիմեր պրպտել ուզեց. վայ անոր, որ ու վարագույրին ձեռքեն անդին դիտեց ու ճշմարտությունը պոռաց:— Մարդկությունը, ահոելի է խոստովանիլը, իր ճիրաններուն մեջ պիտի խեղդն զանի:

Թոլաթոյ մը կրոնքը՝ հետսումուտ տգեղ ծեսերեն մաքրելով՝ կ'ուզե իր նախկին անրծությանը վերածել. ու ահա ամեն բնմերեն անեճքներ կտեղան իր վրա: Թընան մը Քրիստոնյա կրոնքին հիմնադրին կյանքը կ'ուզե ի լույս հանել քննությամբ մը. ու ամեն եկեղեցի կրանադրե զանի:

Թընաններու, Թոլաթոյներու առջև պատկառիլ, խոնարհիլ միայն գիտեմ ես:

Հետի՝ Կրոնքի կույր նախապաշարումներուն գերին ըլլալե Հիսուսի կյանքը գծած եմ այնպէս որպէս կ'ըմբռնիմ և որպէս համոզված եմ որ ըլլա Մարգարեներու՝ Ավետարանիշներու և Ռընանի ընթերցումնն վեր:

Ոճրագործային նպատակը չէ՝ որ ոնիմ գայթակղության ու տարակույսի սերմը ցանելու կրոնամոլներու գանձին մեջ, ու անարգելու Հիսուսը գիտության պրիմալին եւենան դիտելով անոր կյանքը: Ընդհակառակն. գթու վարդապետին հանդեպ ունեցած սերս է որ դրդեց զիս անոր կյանքը գրելու:

Ծիծաղելի է որ եգիպտացիք երկինքը կկարծեին գտնել Նեղոսի ակունքը: Քսան դարեւ վերջ՝ առավել ծիծաղելի վիճակի մեջ չէ՝ որ կգտնվին այն ամենը՝ որք իրենց կրոնքագետին ակն ու աղբյուրը երկինք կ'երթան փնտոիլ՝ Աստվածներու մեջ...

## Հիսուսի կյանքը

Անձանոթ է իր ծննդյան ճշգրիտ թվականը, և անոր զանազան մանրամասնությունները մոլորին մեջ թաղված: Կկարծվի թե Հոռոմի 750-րդ տարի ծննդ ինք, հավանաբար մեր սնդունած թվականն մի քանի տարի առաջ: Նազարեթ եղավ իր ծննդավայրը, Գալիլիու մեկ փոքրիկ գյուղը՝ որ նետու իրմուլ հշանավոր պիտի ըլլար:

Ժամանակը շատ հրապորիչ միջադեպներ հյուսած է իր այնքան սիրած մեկ զավկին ծննդյան վրա. մարդկությունը՝ չուզելով կարծես հավատալ թե իր արյուննեն կրնար ասդպէս լուս որդի մը ծնիլ՝ հոգվոյն սրբ միջամտությունը կտևանի անոր ծննդյան մեջ. և ավանդությունը՝ գեղեցիկ հակադրությամբ մը՝ Երկնալոր Թագավորը Բեթղեհեմի աղտոտ մեկ մսուրին մեջ կտանի ծնցելու. հրեշտակներ կհանեն երկնից երեսը որք ծնյալ Փրկչին փառը կ'երգեն, ու նորածագ անսլոր աստղի մը առաջնորդությամբ մոգեր կբերն Արևելքնեն երկրպագելու համար մորք գրկին մեջ նրեից այդ մանուկ թագավորին:

Պատմությունը՝ այսրան գեղեցիկ դրվագներով զարդարելե վերջ Հիսուսի ծնունդը կրնե հանկարծ: Դիպվածներու շղթան ուկե օղակներու միասմ՝ մոլորին մեջ կկրուսի իսկոյն, երեսուն տարի վերջ նորեն երևալու և այ ալելի գեղեցիկ օղակներու մեջ վերջացնելու համար Հիսուսի կյանքը: Երկնիք վրայեն հրեշտակները կ'անհետանանց տարօրինակ աստղը կշիշանի, մոգերն ալ կ'երթան կիրավին, ու իրերը՝ իրենց նախանի անդորրությանը մեջ կթաղվին դարձյալ: Ա՛ ի՞նչ կ'ըլլա Հիսուս. ոչ ո՞ք կիսուսի անոր վրա, ոչ ո՞ք կմետարրաբրվի իրմով: Կրթու-

թյան, աշխատության, գարգացման իր ՅՅ տարիները և քողի մը տակ կմնան ծածկված: Չանակը որեմն պահ մը վերցնել այս քողը՝ տեսնելու համար անոր տակ Հիսոսի կյանքին գոնե է ն լայն և ընդհանոր գիծերը:

Հիսոսի մանկությունը չ'ունեցավ անշուշտ գարեանային արշալուսի մը հրապուրիչ գեղեցկությունը: Իր մանուկ հասակը չի տեսավ փառաբուշ սիրո մը գգվանքն ու փայտիպանքը. թավիշ բարձերի փայտկությանը՝ տեղի հարստության մը ճնշությանց մեջ չէր որ կ'անցնեին մանկության իր տարիները: Տգես սղքան ծնողաց մը զավակ, անլուս խշոյակի մի խոնավ գետնին վրա մեծած, հազիվ ժամանակ ունեցած գյուղի դպրոցին մեջ կարդալ գրել սովորելու, անո՞ նորը բոլ կ'երթա ան, Հիսոսն աշկերտ կ'ըլլա, իր փոքրիկ բազուկներուն աշխատությունը հայրիկինին հետ խառնվով՝ ընտանիքին ապրուած ճարելու համար:

Հայունի է որ ընտանեկան այսպիսի նեղ պայմաններուն մեջ միտքը չէր կրցած լավ դաստիարակություն մ'ստանալ. սակայն այսպես չէր հոգվոյն համար: Միջավայրը որ կ'ապրեր ինք—բացարձակ երջանկության երազին ամենն ավելի հարմար միջավայրը՝ որպես կվկայի Ռընան—իր լոիկ ազդեցությունը սկսեր էր ներգործել անոր վրա. և ընությունը—դպրագեղ հովհաններու և կանաչագեղ գագաթներու հիմնայի ներդաշնակություն մը—իր հարտաք մատներուն մեջ սկսեր էր ձեւել խորքն անոր սրտին, այն սրտին՝ որ շատ ուշ իր արդյունը պիտի թափեր մարդկության սիրույն համար:— Հավետ ժպտուն ու վսեմ լեռներու այդ պասկին, մշտադաշտ պարտեզներու այդ կենաւու ստվերին մեջ է որ ինք ծիլն օգաց իր մեջ նոր՝ վսեմ կրուերի մը սուաշին ծիլերուն: Ու ինք սկսավ խնամիլ՝ մշակել այդ դեռասի ծիլերը:

Սակայն մշակման իրեն միջոց շատ բաներ մը չի գտավ ինք: Օրենքը սահմաններ գծեր էր ոստիմասիրությանց ասպարեզին, ու արգելել էր որ միտքը երթա իր ընտրած ծաղյիկին նեկտարը քաղել լոկ. հունական փիլիսոփայությունը և գիտությունը բոլորովին անարգված էին և արգիլված Պաղեստինի մեջ: Աղեքսաներյան դպրոցներուն ո՞չ մեկ շարժումը կրնար արձագանք գտնել Նազարետ անշորք գյուղին մեջ: Իրեն ոստիմասիրության սուրբկա հրեականությունը (Judaïsme) կմնար լոկ իրեն. և իրեն ընթերցանություն՝ լոկ Աստվածաշունչը: Բայց կ'երեւ թե ասկեց դուրս ինք կարդացած է նաև մի քանի որիշ հեղինակներ ալ, մանավանդ զՀիլլել:

Այսպես որեմն Պաղեստինի լերանց անձուկ շրջանակին մեջ պարունակված անհաղորդ՝ մտային ու քաղաքական պայքարներուն որք

կմղվեին այդ շրջանակեն դուրս, անգետ՝ գիտության, լոկ իր մարզարենքուն և Սաղմուներուն մեջ ամփոփված, ընկղմված իր խկ միամիտ մտածումներուն և զգացմանց խորը, ինք հետզհետև սկսեր էր բարձրանալ հրեից կրոնքին գծուծ ծեսերեն վեր, իրական աշխարհի սկություններեն վեր մինչև հոն ուր երկրավոր պետությանց զորությունը չի կարենար հասնիլ, որ բնույթյունն ալ դադրեցներ իր ձայնն ու օրենքները, վեր, մինչև երկինք հասնիլ, Աստված մը գտնել հոն—այն Աստվածը որուն ձայնը իր խղճին դատը կլսեր,— երկնային պետություն մը հաստատիլ հոն—պետությունը մը ուր լոկ բարությունը, ճշմարտությունը և Արդարությունը տիրեին:

Եվ բանի որ ինք իր մեջ լոկ ճշմարտություն՝ Բարություն և Արդարություն կտեսներ, բերվեր էր հետզհետև հավտալու թե ինք Որդի Աստուծոն էր, Որդի Դավթի, Մեսիա, այն որ Գալո...<sup>1</sup> Հետևապես սկսեր էր անգիտանալ այն արյան կապը որ կար իր և իր ազգականց միջն\*. Ու կ'երևա թե ծնողըն ալ շատ տաք վերաբերմունք մը չէ որ ցուց կուտային Հիսուսի. հյուսնը անշուշտ լավ աշբով մը չէ որ պիտի նայեր իր երիտասարդ զավակին որ կըսեր «Ոչ միայն հացիվ կեցցե մարդ այլև բանիվն Աստուծոն»: Բաց աստի Հիսուս տեսեր էր թե իր գանկին տակ խլրտող գաղափարներուն առաջին հակառակորդը իր ընտանիքն իսկ կիմանդիսանար. (Ու չէ\* մի որ հետո իր եղբայրները նոր կրոնքին դևմ թշնամիներեն եղան):

Այնպես որ այն կապը որ զավակը ընտանիքին կկապեր երթալով տկարացավ մինչև որ օր ոստը բունեն անջատվեր, ո Հիսուս տունն լրված գտներ զինքը ընտանելո՞րկ, աղքատիկ... ի՞նչ տխուր, ի՞նչ սրտառուց շեշտ մ'ունի անտուն որքի իր հառաչը.— «Երկնից թոշունները իրենց բույնը ունին, զազանները՝ իրենց որչերը, մինակ Որդին Մարդու տեղ մը չ'ունի իր գլուխը հանգչեցնեկու համար»:

Բայց արդեն մտերմության շրջանակին մեջ ըրած իր վեճերը և բարությունները հետևողներ գտած էին իրեն. այնպես որ աշակերտներու փորբիկ խումբ մը կազմված իր շուրջ՝ սկսեր էր պաշտպանիլ զայն ու խնամել: Բայց թողունք Հիսուսը հավատացյալներու իր այս

<sup>1</sup> Այս բարի վերջին տառերն անընթեռնեին են: (Մ. Խ.)

\* Ասոր ապացույցները հայտնի կ'երևին Ավետարանին մեջ: 1. Քարոզած աւոնն իր աշակերտները կ'իմացնեն իրեն թե իր մայրը և իր եղբայրները դուրս իրեն կըսպասին խոսելու համար. Հիսուս կպատասխանե: «Ո՛վ են իմ եղբայրներս ու մայրս՝ եթե ոչ անոնք որոնք ինձ կհավատան»: 2. Հովսեփ իր զավակը փետոնելու կ'երթա տաճարին մեջ. Երբոր կցոնե Հիսուս կ'ըսէ անոր զարմացած. «Դուն չես իմ հայրս. իմ հայրս վերն է, և իմ տուն՝ այս տաճարը»:

Աեղ շրջանակին մեջ անցնելու համար պահ մը ժամանակակից ուրիշ դեմքի մը՝ Հովհաննեսին՝ որու հետ քիչ վերջ սիրո և բարեկամության կապերով պիտի կապվի Հիսոս:

Ծիշու այս ատենները—Քսի 28-րդ տարին—ամբողջ Պաղեստինի մեջ տարօրինակ մարգարեի մը համրավը կշրջեր. Հովհաննեսն էր այն՝ խանդով ու եռանդով լեցուն ճգնավոր մը: Հուդայի անապատին մեջ քաշված խիստ կյանք մը կվարեր. մարախներն էին իրեն սեռներ. ուղտի կաշի մ'էր գոտին, գազանի մորթ մ'ալ իր մերկ մարմնոյն ծածկոցը: Իր քարոզությանց գլխավոր նշանարանն էր «Ապաշխարեցեք, զի մերձ է արքայությունը երկնից»: Ու բավական ալ աշակերտներ գտեր էր իրեն: Հովհաննեսն ավելի ուշագրավ հանգամանք մը տալու համար իր վարդապետության՝ ծես մ'ալ ստեղծեր էր. անոնք որոնք անսպառ իր քարոզությանց կ'ապաշխարեին՝ իրենց մեղքերն արելու համար կմկրտեր զայն ու ամբողջական միտու մ'ըներ զայն Հորդանան գետին մեջ:

Հրեա ազգը՝ տիսուր կացության մատնված՝ սկսեր էր այն միսիթարիչ հավատը ունենալ թե իր նին մարգարեները պիտի գային զինք ազատելու իր սկ բաղդեն: Եվ ժողովուրդը նմանություններ տեսած ըլլալով Հովհաննեսի և Եղիա Մարգարեին մեջ, հաստատեր էր թե Եղիան էր անապատներու այդ տարօրինակ ճգնավորը: Ուստի ապաշխարողներու մեծկակ անբոյն մը խումբ ի խումբ կդիմեր մկրտվելու և սրբվելու համար:

Թեև Հուդա էր իր գործունեության կեղրոնք, սակայն իր համբավը տարածված էր համակ Պաղեստինի մեջ և իր քարոզությունները գացած էին ուշադրությունը գրավելու Գալիլացի նորահասակ վարդապետին: Ուստի սա, հավատացյալներու իր փոքրիկ շրջանակովը, Հուդը գնաց Հովհաննեսն մկրտվելու համար: Երկու երիտասարդ մարգարեները՝ այսպես քով քովի եկած՝ իրարու շատ կհամակրին և երկու երեք շարթվան բարեկամություն մը բավական կ'ըլլա որ Հիսոս փոքրիկ շեղում մ'ընելով իր կրոնքեն համոզվի Մկրտչին վարդապետության\*: Այնուհետև ինք ալ Հովհաննեսի օրինակն տրված անապատի մեջ կ'առանձնանա, և շատ ավելի խիստ կյանք մը կ'անցնե գորեք բոլորովին անսնունեց: Ու երբ ճգնության քառասուն երկար օրերեւ վերջ ինք դուրս կուգա անապատն հաղթական, ընկնած իր մեջ

\* Սատ Մատթեոս ավետարանշին Հիսոս երբ մկրտութենեն ևս կիառնա Հովհաննեսի վարդապետություններն են որ կրարողն ու կ'ըսէ «Ապաշխարեցեք, զի մերձ է բագատրութին երկնից»: Բայց բարերադդաբար շատ չի տեսր այս..... (անշնթեռնելի բառ. ծ. Խ.)

մարմնով ձայնը և բոլորվին հոգիով մեջ խորասոված, աշակերտները մասնավոր ափով մը կիֆարին իրեն և իր ճգնաժան շարք գեղեցիկ քաջագործական դրվագներ կիմուն (Սատանային երեք փորձոթյունները և անոնց պարուղթյունը):

Իր մկրտութենեն վերջ Հիսուս ա՛լ չի վերադառնար իր հայրենի գյուղը, որովհետև համոզված է արդեն թե այդ գյուղը շատ արգասարեր հող մը չի պիտի ըլլա իր նոր կրտնքին սերմերուն համար: Տեսանք արդեն թե իր գաղափարներուն առաջին հակառակորդը իր ընտանիքը եղավ: Եվ իրավամբ ինչպէ՞ս կարելի էր հավատացնել ժողովորդին թե Աստուծո Որդի էր ինք որուն ծնողքն ու եղբայրները կտեսնեն ամեն ատեն: Ուստի ըստ առաջին որ կ'ըսէ «Մարգարէ ոչ ունի պատի ի գաւառի իրում», Հիսուս այս անգամ կ'երթա որիշ գյուղ մը սերմանել իր հունտերը: Ու Կափառնայում կ'ըլլա այս անգամ իր գործունեությանց կերպնը, արգասարեր բարի կերպն մը:

Կափառնայում լավ ընդունելություն մը կ'ընեն դեռատի մարգարեին վարդապետությանց: Ամեն օր հետաքրքրիներու խոսմ մը կպաշառեին զինքը լսելու համար անոր քարոզությունները, հիանալու համար անոր տաղանդին վրա՝ որով կրուեր նույնիսկ է՛ն կննուս առարկությունները, հրապորվելու համար իրով, երկնային հոր մը նշանարելու անոր աշաց մեջ, և Մեսիա մը գտնելու համար անոր անձին վրա:

Անուս խեղճով ձկնորսները կ'ըլլան իր առաջին աշակերտները, ու անարգված՝ ոտնակրիս դասակարգն է մանավանդ որ ամենեն առաջ կիֆարի իր վարդապետության: Խնչո՞ւ. որովհետև իր կրոնքը՝ խոնարհության, սիրո, գթու կրոնքը կ'ըլլա մանավանդ. որովհետև ինք վերցնելով բծախնդիր Ենովայի մը վուեմինդիր խարազանը՝ Երկնային հոր մը գգվող՝ միխթարող ձեռքը դրած էր անոր տեղը, որովհետև անարգվածներու, ինկածներու կրոնքն էր իրնմբ:

«Երանի՛ աղքատաց հոգվով, երանի՛ սգավորաց, երանի՛ հեզոց, երանի՛ խաղաղաբարոց, երանի՛ որ քաղցալ և ծարավի իցին արդարության, երանի՛ ողորմածոց, երանի՛ այնոցիկ որք սուրբ են սրբութ, բանի՛ որ հալածյալ իցին վասն արդարության... Երանի՛»: Մատք. գլ. Ե.

Եվ ինչ որ մանավանդ կնպաստեր ժողովրդյան իր մասին ցոյց տված սքանչացումը մեծցնելու՝ սա էր թե Հիսուս իր կրոնքին գեղեցկությանն կմիացներ իր խոկ անձին հմայքը: Իր աշաց մեջ սիրո ու գթության այնպիսի հոր մը կար, իր ձայնին մեջ անանկ գորվալից ու սիրող շեշտ մը և իր դեմքին վրա այնպես լոյս-շնորհ մը, որ ժողովորդը ստիպվեր էր կարծն հավատալու թե անոր ներսիդին երկ-

նային հոգի մը կար որ կճառագայթեր իր մարմնեն դուրս, թէ այս էր խոստացված Փրկիչը, այս՝ Դավթի որդին, այս՝ Մեսիան:

Այսպես որեմն իր անձը հետզհետև ավելի սիրելի կդառնար ժողովրդին մեջ, իր կրոնքը ավելի շերմ հետևողներ կ'ունենար, ու իր համբավին շրջանակը երթալով կլայննար, կլայննա՛ր ամբողջ Պաղեստինու մեջ:

Բայց բան մ'ալ կար որ ավելի կնպաստեր իր համբավին տարածման. իր հրաշքներն էին ատենք:

Ամեն ատեն, ամեն ատեն, իր ամեն մնկ քայլափոխին, կաղերու՝ կուրերու համբերու՝ խովերու՝ հաշմանդամներու՝ դիվահարներու ամբողջ բանակ մ'է որ կտեսնինք իր եւուին, որտեք հրաշգործի՝ Մեսիակի իր համբավը լսած, իրեն կդիմեն ամեն կողմէն՝ անվրեաք թշկվելու հաստատ հավատքով: Ու իրենց իսկ այդ հավատքեն թշկված ետ կդառնան ամենքն ալ: Հավատքի բուժիշ այդ գորության կրնանք ավելցնել նաև այն բուժիշ ույժը որ կծորեր Հիսուսի խաղաղ դեմքեն՝ սիրալիր նայվածքեն որ գորովագին ձայնեն\*:

Այսպես ահա իր հմայքը իր կրոնքին գեղեցկությանը վրա բարդելով Հիսուս կրցած էր բաղդատաբար շատ կարճ ժամանակի մը մեջ հետևողներու հակա խումբ մը՝ հավատացյալներու լուս-պսակ մը բոլորել իր շորջ:

\* Դիտողություն— թերևս առարկվի թե ինչպէ՞ս կարելի է լուծել լոկ հավատքով և հոգեկան ներգործող գորությամբ այն հրաշքները՝ ուր ո՛չ հավատքը բաժին ունի ոչ ալ հոգեկան գորություն որևէ ազդեցություն: Ինչպէս՝ հինգ նկանակ հացին օրինությամբ հազարավոր նկանակներու բազմացումը: Կպատասխաննենք.՝ հավանական է որ Հիսուս լավ կճանաշնար ժամանակի գաղտնիք գիտությունները. այն արվեստը որ հին ատեն մանավանդ հասած էր իր կատարելության, և որ հիմա իսկ-թեն ոգեվար-շատ հրաշքներ կգործեն: Ու սավորն ապացուցը բուն իսկ Ավետարանին մեջ կրնանք գտնել.՝ հրեաներեն ոմանք Կ'առարկեն Հիսուսի թե իրենք ալ կրնան դեեր հանիլ: Հիսուս կպատասխանեն՝ «Ձեր համած դեերը Սատանային գորությամբ են, իսկ իմինները՝ Աստվածային գորությամբ»:

Եվ նետո հպատնի է որ հրաշքներն ոմանք ալ—ո՞ գիտն, թերևս մեծամասնությունը—իր միամիտ կենսագիրներու կողմն հորինված են շահեկան հանգամանք մը տալու համար պատության, և գերմարդկային գորութ մը Հիսուսի՝ բանի որ տարօրինակ հրաշքներ կան որոնց վրա իր կենսագիրներն իսկ համաձայն չեն. ինչպես Ղազարոսին հարությունը:

Բայց ինչ հարկ դեռ ուրիշ փաստեր փնտովի մեր ըստածին իրքն հաստատություն՝ բանի որ հրաշքներու նեղինակն իսկ համաձայն է մեզ նետ:

— Կին դու, հավատք ք կեցոցին զքեզ:

— Եթե մանանեմի հատի շափ հավատք ունենայիք կրնայիք լնրան պատվիրեն տեղեղ շարժեն. և պիտի շարժեր:

Նոր կրոնքին աղմուկը լավեր էր Հրեաստանի ամեն կողմերեն, ու նոր մարգարեին համբավը արձագանք գտեր էր ամենորեք. սակայն Հիսուսի վերջին անգամ Երուսաղեմ մտնելը մասնավանդ փառքի ամենեն գեղեցիկ դափնին եղավ ձռնված անոր անդուզ ու անվիատ գործունեության:

Ի՞նչ հիանալի պատկեր որ կներկայացնե Հիսուս Երուսաղեմի ճամրուն վրա: Իր գալստյան լուրջ շուտ կտարածվի քաղաքին մեջ, ու ժողովորդը խուներամ կշտապեր դիմավորելու «Դավթի որդին, ու ահա կուգա ան, խոնարի գայթի գայթ իշուկի մը շաղակը նատած: Ուկենամուկ պատմունանեեր կփովին հեռուն որդվոյն ճամրուն վրա. ասքուսը ձիթենիի ջոտերով կ'ողջունե իր փորկիչը. Զաքեռու ծառիս վրա կրաքարանա հրաշագործ տեսնելու: Ու ամեն շրթունքն կրաքարանա հրճնվագին սա աղաղակը: «Որդի Դավթի» օվասննա՝, ի բարձուն»:

Ու քանի երկար տարիներ վերջ հիացման այդ մինենոյն աղաղակն է արձագանք կգտնե տակավին անոր անվան կառուցված ամեն տաճարներու գմբեթին տակ: «Օվասննա, օվասննա՝ ի բարձուն»:

Ահավասիկ Հիսուս իր փառաց գագաթնակետը հասած:

Եվ ահա այս գագաթն է որ կ'սկսի հայտնի երևալ արդեն անկման զարդարակը այնքան շեշտ, որքան չեր եղած անշուշտ վերեկը ուղին:

Օվասննաներու արձագանքը կ'երթա նախանձի մը ծիլը ժանտացնել դպիրներու սրտին մեջ, ու քահանայապետը կ'սկսի վախով մտածել թե մի գուցե ոչխարներու իր հոտը հետաքին գինը լքանելով երթա անո՞ր եռեն որ ինքզինք «նովիկ բարի, հովիկ բազ» կկոչեր:

Հովհաննեն աշակերտներու մեծկակ թիվ մը կհաշվեր արդեն իր շորջ և Հիսուս հաջողեր եր Մովսիսականության ծոցեն հավատացյալներու հշանակելի թիվ մը խել:

Եվ դպիրները շատ լավ աշքով մը չե որ կդիտեին զայս: Անոնք սկսեր էին թշնամության հնարք մը մտածել այս երկու խանողվ լեցուն երիտասարդ մարգարեներուն դեմ: Ու հաջողեր էին իրենց թշնամությանը մեջ: Հովհաննեն երկար առեն բանոի մեջ մնալու վերջ իր գլուխը ափսենի մը մեջ նվեր տվեր եր Հերովդեսի աղջկան իրքեւ պարի մրցանակ:

Սկրտչին այսպես գլխատման լուրջ վախի սնդիկը կաթեցուցեր եր Հիսուսի սրտեն ներս. Հիսուս պահ մը անապատ փախիլ փորձեց՝ բայց ժողովորդը չ'ուզեց թողուն գինը և աշակերտներեն ոմանք ըն-

կերանալով իրեն հետ, համոզեցին զինքը ու կրկին Կափառնայում բերին զայն: Սակայն ա՛լ առջի հանդարտ և ապահով կյանք չ'ունեցավ բնակ: Դպիրները չի կարենալով ուղղակի ձերբակալել տալ զայն ու պատժել—քանի որ ժողովորդին մեջ զայն սիրողներու մեծկակ թիվ մը կար—պատճառ մը կինսուեին, հանցանք մը շանալ գտնիլ իր գործերուն մեջ: Բայց լուսին մեջ կարելի՞ էր սև բիծ մը գտնիլ, քանի որ ինք Լուսն էր: Ուստի փորձեցին իր ազատ գաղափարներեն օգտվիլ՝ զինքը մատնելու համար քահանապետին կամ կայսեր\*: Սակայն նա կրնար միշտ իր հնարամիտ հանձնարով խոսափողական պատասխաներ գտնել և...\*\* հակառակորդներուն բերանը:

Քահանապետը դպիրներուն հետ ժողով գումարեր էր զայն նենգությամբ բոնելու համար. Հիսուս զգաց թե կարելի շպիտի ըլլար երկար ատեն շարունակել իր կյանքը՝ լարված այնքան թակարդներու մեջեն. ուստի ովեց օգտվիլ կյանքին իր ալս վերջին օրերեն ապահովելու համար իր նոր կրոնքին դողդոցուն հիմնեց. ուկի խրատներով զինեց իր աշակերտները, ցուցուց այն դժվարությունները որոնց պիտի հանդիպեին իր գծած ճամբուն մեջ: Բացատրեց թե «եթե դալար ուտին այսպիս կ'ընեին ինչ պիտի ընեին որեւն չորցած ճրուերուն». և ամրապնդելու համար անոնց երկշուն սրտերը՝ հետմատու իր աշակեցությունը խոստացավ անոնց և երկնից արքայությունը պարզեց:

Տեղակ իր մոտալուն մահվան Հիսուս յոր մեն մի շարծումին, մեն մի խոսքին մեջ անանեկ բան մը դրավ որ դարեր ամբողջ մարդկության սիրութ թրթուացներ:

Իր մահվան հախընթաց երեկոյն այնքա՞ն մոտեցած էր կյանքի վախճանին, Հիսուս վերջին անգամ մ'ովեց վայելել հաճույքը իր մոտիկը բոլորված տեսնելու իր տասներկու աշակերտները. ան՛նք որոնք իր կրոնքին առաքյալները պիտի ըլլային իր մոտալուն մահեն վերօ: Ծաշի սեղանին շուրջ հալարեց զանոնք, խոսեցավ անոնց խանդակաթ սիրով մը, վերջին եռանդով մը խոսեցավ անոնց, տվակ ինչ որ կար իր կուրծքին տակ ամենեն ավելի վսեմ, ամենեն ավելի գեղեցիկ: Հետո հաց բաժնեց անոնց ու գինի. «Անքեք. ըստ այս է իմ մարմինը. խմեցեք այս է իմ արյունը»:

\* Զինքն Կ'ամքատանեին թե Շաքարը սուրբ չեր պահեր քանի որ հրաշքներ կործեր և հիփանդներ Կ'աղեկցներ այդ օրը: Զինքը փորձելու համար կհարցնեին թե «Կայսեր տուրք պետք է վճարե՞լ»: Բայց Հիսուս խոսք վարպետ դարձվածով մը անա՛նկ շիռը կացության մը կդնէ զանոնք՝ որ լիկ կստիպին հետանալ իրու:

\*\* Զնշված բառ: (Մանոք. Խմբ.)

Պարզուկ՝ գեղջուկ այս սեղանին վրա այնքան սեր կար, այնքան գորով, որ Հիսոս չկրցավ զայել արցունքն իր աշերուն, ու վրեմիլընդրության շանթ մ'է որ պոռթկաց իր կործքին, եթե մտածեց թե վերջինը պիտի ըլլար այս հավաքումը, և թե ի՞ր իսկ աշակերտներն մեկն էր որ պիտի մատներ զինքն ի մահ. վա՛տը, վատը!—

«Պիտի մեռնի մարդու որդին, բայց վա՛յ անոր որուն ձեռորով պիտի մատնվի»:

Աշակերտները հոգված շվարած զինքը կոդիտեին. սարսուի փուշն է որ Կրօքի ձկնորսներու երակին մեջ: Ու Հուդա՝ սիրտը կործքին տակ քարացած՝ սև խորհուրդը կ'երթա գործադրելու: Անզգամը երեսուն արծաթի պիտի ծախեր իր Տերը:

Ու Հիսոս մոռնալ ուզելով կարծես իր մոտալուտ մահը, արցունքը իր աշքերուն ետին զայած դեռ կիսուի, կ'ուսուցանե անոնց ու խնարմության դասը տալու համար կարգավ ունենք կլվա անոնց: Զիթենյաց լեռը կմեկնին: Հիսոս հոն պահ մը կթողու զայնս ու քարընկեց մ'անդին Գեթսեմանի պարտեզը կ'երթա ստանձնանալու:

Հոն՝ հողին վրա ճերադիր, արտապայից աշերն ալ դեպի երկինք հստած, կ'աղորե՛, կ'աղորե՛ անոր՝ որուն զավակը զգաց զինքը, անոր՝ որուն կրոնքը քարոզեց, անոր՝ որու համար ավա՛ղ կմեղցնեին զինքը:

Վա՛յս, լացավ պաղատեցալ հեկեկագին: «Հա՛յր, անցուր զբաժակս զայս...»: Բայց լուռ է երկինքը, ու հայրը անտարբեր իր զավակին լացին: Մահվան դառը բաժակը իրեն կապասե:

Ու ահա կուգան, կուգան զինվորները, բոցավառ շամերով ու վայրենի աղաղակներով կապաշրբեն զինքը իր աշակերտներուն մեջ: Ի համար ձերքակալման Հուդա իր տիրոջ ճակատը կհամբուրեն. ժամու շրթներու նենգուր համբույրին տակ կարստա Հիսոս. «Հուդա, կգոչեն, համբուրելո՞վ կմատնեն զիս»:

Ապտակելով ծեծելով Կայխափայի կտանին զայն, ու անկեց Պիդասոս կոտակալին: Անմեղունակ գանուկի մը դատը կ'ըլլա իրեն. ի՞նչ հանցանք կարելի էր վերագրել Սիրո վարդապետին. և սակայն «ի խա՛չ կգոչին թշնամի թերանեներ, ի խաչ, թող անոր արյունը մեր և մեր զավակներուն վրան ըլլա»: Ու Հիսոս թշնամիներուն ձեռքը կհանձնըի: Խ՛նչ սիրո բգրտող պատկեր. կծաղրեն զայն, կհարվածեն, կ'արհամարին մեծ վարդապետը. կարմիր բղամիդ կհագցնեն իրեն. եղեգ զավագան մը կոտան իր ձեռքը. փուշ պակ մ'ալ իր գլխուն, ու «Ահա՛, կգոչեն, ահա՛ թագավորն Հրեից»:

Ու անտրտունջ ու լոիկ Հիսոս կկրե այն բոլորը:

Օրը լուսնալու մոտ խաչ մը կուտան իր ուսին, ու Հիսոս տկար ու վտիտ, մահվան անարկու փոթորիկը իր գանկին մեջ և ուսին վրա փայտյա մի ծանր քառարեն՝ կղողդոցն Գողգոթայի զատիվերին վրա՝ բայց վախնալով որ միգուցէ դեռ չի խաչված մեռնի Հիսոս՝ խաչը անցորդի մը կունակը կուտան:

Ժամը մը վերջ Գողգոթայի գագաթը խաչ մը կբարձրանա, մարդկության փրկիչն իր վրա գամկած: Շեռքերեն ոտքերեն արյունը կկաթե, բազուկները գալար գալար կարկվին. գամերու ցավը ներսիդին կկուտաս, ու բուն ծարավ մը բերանը կցամքեցնե:

Հուահնատ ակնարկ մը կպտտեցնե իր շուրջ, ու սկսություն և ստորանություն կտեսնե միայն: Իր երկու կողմերուն վրա չարագործներ կան խաչված որք կիացցեն իրեն. իր խաչափայտին տակ պահապան զինվորները նատած իր հագուստները կրածանեն և իր միակոտր պատմումանին վրա վիճակ կձգեն. գծուծ անսիրտ հրեաներ կ'անցնին իր առջենն ու կծաղրեն զանի, ու արհամարհանքի թուրը կնետեն երեսին. «Ահա որդին Աստուծո. ինչո՞ւ չի զար իր հայրը զինքն ազատելու»: Ու վարը ոտքերուն տակ՝ Երուսաղեամ քաղաքը կննչե սննդամության ու ամբարշտության մեջ քարացած կարծրացած:

Սև կտեսնե Հիսոս, ու մարդոց արտերը, ու ամենուրեք:

Քաջությունը վայրկյան մը կլքանե զինքը, ու Հիսոս պահ մը կզղօա կարծեն այսպիսի անզգամ մարդկության մը համար խաչվելուն: Ու դա՛ն, դա՛ն բողոք մ'է որ կպոռքկա.— «Աստված իմ, ընտէ Է՞ թողիր զիս»:

Վայրկյան առ վայրկյան իր ուժերը զինքը կլքեն, ցավերը կնվազին տակավ, ու մահվան ցորտն է որ հետզետեւ կմաղվի իր մորթեն ներս: Իր առջև պարզվող գարշենի այդ տեսարաննեն վեր կվերցնե իր աշքերը. «Հայր, կգոչե, Հայր, հոգիս ծեռացդ մեջ կդնենմ...»: Քիչ վերջ՝ «Հայր, թո՛ղ նոցա, զի ոչ գիտեն զինչ գործին»:

Հոգնած կոպերը կիֆակվին, գլուխը կուրծքին վրա կ'իջնա, ու սառ շրթներեն խեղդուկ ձայն մը կլավի. «Ամեն բան կատարված է...»:

ԽԱՅԻՆ ՎՐԱ ՄԱՐԴ Մ'Է ՈՐ ԿՄԵԹՆԻ, ԱՍՏՎԱԾ Մ'Է ՈՐ ԿԾՆԻ:

\*\*\*

Հավիտենական հանգստյան մեջ փակե աշերդ ա՛լ, Հիսոս: Մոոցի՛ր ցավերդ, մոոցի՛ր տառապանքը, ձեռքերուդ գամն ալ մոոցիր: Մարդկությունը զղաց իր ու ապերախտությանը վրա, ամշցավ ու լա-

ցավ, արտասլեց ու աղոթեց քեզի ու պաշտեց գքեզ: Մարդ էիր, ու Աստված ըրավ գքեզ:

ԱՌ փառքը, աՌ մեծությունը կմնա քեզի, Հիսուս: Ամեն անգամ որ խոնարհության մանիշակը փթթի կուրծքի մը տակ, ամեն անգամ որ սիրո վարդ մը բողբոջի սրտի մը մեջ, ամեն անգամ որ գթո ու բարության սերմը ծլարձակի հոգվո մը խորը, մարդկությունը դափնի պասկ մ'է որ կնվիրե հոգնած ճակտիդ:

Կ'ըսեիր. «Որդին մարդո տեղ մը չունի իր գլուխը հանգչեցնելու համար». մեր սրտերը կուտանք բարձ՝ բազմաշխատ գլուխդ, ու մեր կուրծքերը՝ քեզ ապավեն:

## Վերջ

# ՄԱՐԴԸ

## (Ավարտական շարադրություն)

1905

Սկզբունք—Պերպերյան

### Մարդը

#### 1. Ա ն ց յ ա լ մ ա ր դ ը

**Նախամարդը.**— Դուք, մարդեք, քանիերորդ դարու լուսափառ սեմին վրա բարձրացած, մտածած եք երբեք ձեր նախահոր վրա, դողդոց ու բիրու, տկար ու վայրագ միանգամայն այն էակին վրա, որ սերունդէ ի սերունդ, դարեւ ի դար գքեզ կազմեց, գքեզ, լուսի երկնարադ զավակեն:

Անապասիկ գազանարճակ անոնցներու խորերեն, թաքթաքուր որշերու ստվերներեն դորս կուտա անի, վերին անդամատը կենդանական հառաջադրությանց զարգացման, շքեղ որակ արարշության մեծ գործին, նախամարդը:

Անձանոր կյանքէ մը բնության ծոցին մեջ նետված, ի՞նչ տկար է ան: Երկինքը իր գլխուն վերկ՝ որոտումներու լեզվով կխոսի իրեն. երկիրը իր ոստերուն ներքէ՝ իր դիակազմ պատյանը կդրդեցնէ ու իր շուրջ բյուր գյուր գազաններ—վիթխարի անասոնեն մինչև նետին ժանտ գեռունը—մանվան քստմնելի գործիքներ կցուցադրեն իրեն: Այլ ի՞նչ հարկ որ տիեզերքը համայն զինվի այս տկար արարածին դեմ, քանի որ, ինչպես կ'ըսէ Բասքալ, «Ծոգի մը, կաթիլ մը ջուր կրավեն զայն մեղմնելու»:

Մե՛րկ ձյունին ու բուրին դեմ, անպատսպա՛ր շանթին ու նեղեղին ներք, անզե՛ն գազաններու նիրանին տակ, ի՞նչ բան ուներ ուրեմն իր մեջ տկար այդ էակը, որ կրցավ քայլել անվտանգ մահվան այնարն թակարդներում մեջեն, ու աճե՛լ, ու զարգանա՛լ, ու բարձրանա՛լ: Ինք — խավարին ծոցեն ծնած դողդոց կայծ մը, ինչպիսի՞ հանգանանք մ'ուներ իր մեջ, որ կրցավ վառ պահել իր լույսը այնքան սպառնալիքներու մեջեն, ու մեծնա՛լ, մեծնա՛լ, մինչև բարոյական արև մ'ըլլալ տիեզերին մեջ, լույսի՝ հառաջադիմության արևը:

Իրեն սպառնացող կենդանիները նետզինետեւ անոր լուծին տակ մտան, անընտել գազանները խուզ տվին տակավ այս անախործ հյու-

թեն, ու աճապատճերու աճայությանը մեջ գացին կորհնչիլ: Բնությունն ալ իր ուժերուն աշխարհակալելը տեսավ՝ մարմնով փոքր այլ ոգով մեծ այս էակին կողմէն:— Այո՛, որովհետև անիկա գերազանց զենք մ'ուներ իր ձեռաց մեջ, որովհետև մարդ-հյուլեն շանքերեն ավելի աճավոր՝ տիեզերքներեն ավելի փառավոր զորություն մ'ուներ իր մեջ՝ մեծ անկորնչելի զորություն մը, բանը, այսինքն, մտածումը և լեզուն:

Անա այս երկու քույրը կարողություններն են որ ձեռք ձեռքի՝ առաջ-նորդեցին մարդը հառաջադիմության ուղղովն մեջ:

**Մտածման դերը.**— Անորի էր մարդը, մերկ էր ու աճապատպար-ի՞նչ ըրավ:— Մտածեց, ու արմտիքը արևոտն տակ կոհսակ կոհսակ հաս-ցոց իր սևնդառաս հասկերը. աճասնոց մորթեր և բուսական հյու-վածքներ հագուստը հայթաշեցին իրեն, ու քար քարի վրա ապահով՝ բնակարաններ կանգնեցին անոր համար:

Զյունը ու ցուրտը անոր արյունը կասուեցնեին երակներուն մեջ. ի՞նչ ըրավ անիկա:— մտածեց, ու կաջը ցայտեց քարին բաղխումն, կայծը՝ որ իր ջերմությամբը մետաղները հալեցնելով ճարտարիւսոր պիտի կազմակերպեր, կայծը՝ որ իր բոցին փայլունությանը մեջն աստվածներ, կրոններ պիտի ծներ, կայծը, որ տարուկ օճախին շորջ ընտանիքները հավաքելով՝ ընկերության կապը պիտի ապահովեր:

Մարդը յուր տկար ձեռները միայն ուներ իբրև գործի\* ու զենք՝ պիտի հողին, կարծը քարերուն ու սպառնող վըտանգներուն դեմ ի՞նչ ըրավ:— մտածեց ու երկրիս կեղլը պատառեցավ՝ տալու համար մար-դուն հազարավոր դարերէ ի վեր իր ծոցին մեջ պահած գոյցները, մետաղները, որոնք իրեն համար զենքի ու գործիքի ձևերուն տակ պիտի ձուլվեին ու իր ճարտարագործ Արվեստին նյութը պիտի հայ-թայցեին:

Անհաղորդ ու կղզիացյալ էր մարդը միջոցին մեջ ու ժամանակին. ի՞նչ ըրավ:— Մտածեց. փորբիկ փորբիկ ձևեր քով քովի շարվեցան կազմելու խորհրդավոր ու երկնագիծ այն գիրը՝ որ ամբողջ ժամանակի ու ամեն տեղվոյն մարդկությունը իրավ կապելով մեկ մարդ մը պիտի կազմեր, մեկ միտք մը, մեկ գրիչ մը:

Դեռ շատ տկար էր ինք. կյանքը վայրկան մէր միայն, մինչ ան-հուն էին իր իշճերը. պետք էր շատ ու շատ գործել. ի՞նչ ըլավ:— Մտածեց, գիտությունը գտավ, ու ան ալ շոգին ու էնկտրականությունը,

\* Խճճագրում այսպիս է գրված:

որք զինքն ու իր միտքը արագ թոցուցին միջոցին մեջեն, ու մարդոց կարողությունքն ու մտածումները իրարու հանդիպելով հսկա զորություններ կազմեցին բնությունը կերպարանափոխող ու ի սպա կոչող անոնց:

**Լեզվին դերը.**— Այսպես ուրեմն նախամարդը իր Բանին շնորհիվ քայլ առ քայլ, հաղթանակե հաղթանակ, հասուց արդի մարդը: Տեսանք մտածման դերը մտադիպության յորաքանչյուր քայլափոխին մեջ. կարելի չէ նաև ուրանալ լեզվին ալ քաժինը հառաջադիմության մեծ գործին մեջ: Նա՛ էր որ դաստիարակեց բանականությունը և կյանք տվակ մտածման. նա իրար կապեց մարդերը և ընկերության ու կազմության նպաստեց: Բայց թողունք որ Հետուեր, գերման փիլիտիայն, իր կարծիքը հայտնի լեզվի մասին.— Մսի փոքրիկ կույտ մ'է լեզուն. բայց թեթև շունչ մ'է որ կրոշի շրթներեն. բայց առանց ասոնց մենք ամենք ալ վայրենիներ պիտի զլայինք տակալին անդունդներու, անապատներու մեջ թափառական:

Այսպես՝ մտածումը և լեզուն իրարու միացած՝ առաջընդեցին մարդը ամեն դմվարություններուն մեջեն և դանդաղ այլ վատահ հառացումով մը քերին հասցուցին իր ներկա վիճակին:

Թողունք ուրեմն ա՛ նախամարդը իր քարայրին մթություններուն մեջ, գբարվելու համար վայրկյան մը արդի մարդով:

## 2. Ա ր դ ի մ ա ր դ ը

**Ի՞նչ է արդի մարդը:**

— Պատախանին տեղեկանալու համար հերիք է հետաքրքիր ակնարկ մը նետել մեր շուրջ: Ամեն իրի վրա իր կնիքը դրոշմած է ան. գործված ամեն բան, արտադրված ամեն առարկա անոր վրայոք շատ բաներ պիտի պատմեն քեզի, շա՛տ բաներ՝ որոնք սակալի այդ մեծ էական մի քանի փոքր կետեր հազիվ պիտի կրնային բացարել:— Ամբողջական գաղափար մը կազմելու համար իր վրա՝ պետք է թենինք զայն գոնեն իր ընդհանուր գձերուն մեջ: Տեսնենք ապա մարդը ընդհանրապես իր ընկերության մեջ, իր Կրոնքին մեջ, իր Գիտության, իր Արվեստին և իր Բարոյականին մեջ:

**1. Ծնկերությունը**— Ռուս, գաղղիացի իմաստաերը, ընկերություններուն ծագման վրա խոսելով սապես կ'ըսէ. — «Չգիտեմ ինչպիսի՝ քմահանույցք մը մղված մեր նախամարք լրեցին բնության վիճակը, իրարու մոտեցան և ընկերություններ կազմեցին: Նախ՝ անջատ ու եր-

շանիկ՝ վայրենի վիճակին մեջ, իրարու միացան մարդիկ, ու ասկեց ծնան բոլոր իրենց թշվառությունները:

Հեգնական—չ'սեղու համար ծիծառելի—շեշտ մը չե՞ք գտներ գաղողացի իմաստանքին այս խոսքերուն մեջ՝ ամբողջ մարդկության համար: Մենք կկարծենք թե վայրկենական հանաւության մասին մը շա՛տ ավելի տևական, և քմահաճ սարցւեն\*\* մը շա՛տ ավելի լուրջ բան մ'ըներ ա՛ն, որ մարդիկը՝ գրեթե բոնի՝ իրարու կմոտեցներ, իրարու կմիացներ: և անիկա բնությունն էր: Հարկ չ'կա մանրամասնությանց մեջ մտնել ապացուցանելու համար թե մարդը ի բնե ընկերական էակ մ'է, քանի որ իր մարմինը, իր միտքը ու հոգին ընկերություն կպահանջն իրենց հոկ կյանքին կարելիությանը համար:

Ընկերության հիմք ընտանիքը եղավ, եթե կարելի է սակայն այդ նվիրական անունով կոչել կիրքի կապերով եղած այն նախնական կենակցությունները: Այնքան տխոր էին ամոնք, այնքան և անամական: Բայց նույնը չի մնացին անոնք: Ժամանակի ընթացքին մեջ քիչ քիչ բարեշրջելով անամական այդ բիրու կենակցությունն ամենն և ավելի վսկե միացումը կազմեց արդի ժամանակի մեջ, կյանքերու, նոգիներու ներդաշնակ միացում մը, երկինքը երկրի ցոլացնելու պաշտոն ունեցող միություն մը, բո՞ւ ընտանիքը:

Ընտանիքն է որ ծնունդ առին տակավ ավելի մեծ ընկերություններ: Նա մեծնալով ցեղերը կազմեց. բայց այս ցեղերը հարատու կոյիվի մեջ էին միմյանց հետ: Կյանքը անդադրում պատերազմ մ'էր այն ատեն, ու ցեղը՝ մշտաշարծ բանակ մը: Ցեղին ամեն անդամներն ալ պարտ էին կովիլ ու կովիլ շարունակ՝ բացարձակ հրամանի մը տակ: Իրավունք, պարտք, արդարություն, ասոնք ամենքը անկե կրդիսեին:— Այսպես կարելի չեր սակայն երկար ատեն շարունակել: Եվ հիրավի՝ երբ կյանքի ավելի նեշտին պայմաններ գտնելով՝ մշտաշարծ այդ բանակը կանգ առավ, գեղարվեստն ու ճարտարվեստը խաղաղության կյանքու ստվերին մեջ անեցան, զինվորը աշխատավորեն բաժնվելով՝ ժողովորդ և կառավարություն առանձին մարմիններ եղան, ու երկուրն ալ պատկան կեցան բանի մը որ օրենք կոչվեցավ: Օրենքը, այս իսկ էր մեծագույն արժանիքը մարդկության: Խնք օրենքին տերը, ինք միանգանայն անոր հապատակը:

Օրենքն ալ հետզհետէ ավելի լավ ճշուելով ընդհանուրին և անհատին պարտքի և իրավունքի ասմանները՝ կրցավ բարձրացնել

\* Քմայր, երևակայություն, վաղանցուկ ցանկություն (Փր.):

\*\* Քմահանուզը: (Փր.)

մարդը և տանել զայն մոտ, մի՛շտ ավելի մոտ արդարության կենսավետ մարգերուն:

**2. Կրոնք.**— Մարդս լոկ ընկերական էակ մը չէ, այլ նաև կրոնազգած էակ մը: Կրոնքը, երկրողի՝ հուսիփ՝ հիացման բարդ զգացումներեն՝ ծլած չքնա՞ն ծաղիկ մը, ծլած է ամեն ժամանակի մեջ և ամեն կիմայի ներքիւ: «Եթե Երկիրը շրջագայիք, կ'ըսէ Պլոտարքոս, կրնաք բաղաքներ գտնիլ առանց պարապի, առանց դպրության, առանց օրենքի, բայց ո՛չ ուրեք գյուղ մը՝ որ չունենա իր աստվածները»:

Կրոնքին տիեզերականությունը անուրանալի է ուրեմն: Ու իր դեռք, իր ազդեցությո՞ւնը: Կարելի՞ է չտեսնել զայն պատմության մեկ ծայրեն մինչև մյուս, անհատին կյանքին վրա, ժողովրդյան կյանքին վրա, ու ամբողջ ընկերությանց վախճանին վրա:

Կյա՞նքը, հարցուցեք զայն սրբնեսին, որ անապատ աշխարհին ամայությանը մեջեն իր գոյնիշ ավագներեն թոթափելով վեր կրարձացնե դիտելու համար կյանքով ու խոստումներով լեցուն նորածագ արելը. հարցուցեք զայն Բորգին որ՝ գոռող կ'իշխէ մեռած դաշտերու անեղորությանը, ու իր ոտից առջեն անցնիլը կդիտե արհամարհուն՝ դարերո՞ւն, դարերո՞ւն... Հարցուցեք զայն եգիպտացի մոմիային՝ որ իր փլատակներուն ներքև հազարավոր տարիներեն ի վեր կ'սպասէ, կ'սպասէ...

Կրո՞նքը, հունական բաղաքակրթության մեջ գացեք փնտոիլ իր դեռք, թե ո՞վ տվակ անոր իր այնքա՞ն շքեղ փայն, թե ո՞վ ծնակ Հոմերոս ու Փիդիասը որոնցմով այնքա՞ն հպարտ կլանճնի նա:

Կրո՞նքը, Արարի՞ն հարցուցեք զայն, որ իր մեծ առաջալին ձայնին ի լուր՝ թոթափեց իր վրայեն անապատի թափառահած կյանքը, ու իր բաղաքակրթության լուսափառ ջանք գնաց պտտցնել միջին դարու խավարակուու տգիտության մեջ, Եվրոպին մեկ ծայրեն ի մյուսն:

Կրո՞նքը, Հռոմի փլատակներուն հարցուցեք զայն, միջին դարու խաչակիրներուն, հավատարենության ատյաններուն, արյուններո՞ւն, անյուններո՞ւն հարցուցեք զայն...

Կրո՞նքը, ամեն տեղ և ամենո՞ւն հարցուցեք զայն: Ամենքն ա՛լ պիտի խոսին ձեզի մարդկության բայլերուն ընկերացող այդ երկնաքը ոգկույն վրա որ անդրշիրիմյան կյանքի փայլուն հեռանկարներովը դյուրեց մարդկությանը ամրող, ու իր Հռոմին երգովը առաջնորդեց մարդը վեր, մի՛շտ ավելի վեր, Աստվածներուն մոտ...

**3. Գիտությունը.**— Մարդը կրոնքի սիրուցն նետ որիշ սեր մ'ալ ունի, եղբայր մ'առջի սիրուցն, որ սակայն տարբեր ճամրաներեն պիտի բակեր ու մերթ թշնամի պիտի ըլլար իր եղբոր: Իր երիտասարդության

շրջանին սկսուիվ հարած Կրոնք-Պարիկին՝ մարդկությունը կսիրեր անոր թերեւնն լսել ամեն երևոյթներու բացատրությունը և անոր հրաշակյուս ծածկոցվը ծածկել մտքին մեջ ամեն մոլու անկյուն, բնության մեջ ամեն խավարին անդունդ: Բայց առեն մ'եկավ որ դիցարանության լեցուն վեպերը չի կրցան հագեցնել մարդուն հետաքրքիր միտքը: Լուսին ծարա՛վը ունեցող մարդը ուզեց վերցնել բնության քողը ու քիչ քիչ ճանչցավ զայն իր այլազան երևոյթներուն մեջ. ասկե՛ց հառաջացան գիտությանց այնքանի բազմապիսի ճյուղերը:

Այլ մարդ չ'բավականացավ այսչափով, չ'շուտացավ օրենքներ հաստատելու բնական երևոյթներուն մեջ: Պայմաններու այս աշխարհնեն դուրս արձակեց իր միտքը, անպայմանին՝ բացարձակին մեջ: Անխատան իր իսկ մտքին վրա, զայն ալ անցուց իր քննության բովեն և ուղղությունը մը տվավ անոր: Տարակուտան իր իսկ գիտության վրա, անոր հիմերը քննեց ու ապահովեց. ու աստի այն նոր՝ բարձրագույն գիտությունը, գիտություններու գիտությունը, փիլիսոփայությունը:

**4. Գեղարվեատ.**— Մարդը լոկ խորուն միտք մը չ'է սակայն, ալև զգայուն սիրու մը: Եթե միտքը ճշմարտության է ծարավի, սիրուը գեղեցիկին ո՛չ նվազ կցանկա: «Պետքով արհեստավոր, բնազդմամբ արվեստավոր մ'է մարդը»: Եվ, իրավամբ, կտեսնենք որ քարայրներու այն նախամարդը՝ երկրողով ու կրշտությամբ լեցուն իր վիճակին մեջ՝ կրցեր է հասու գործիքով մը գեղեցիկը պատկերել իրմեն դուրս՝ եղջուրի կամ քարի մը կարծրությանը վրա:

Այլ ինչո՞ւ արվեստը, պիտի չսեր, քանի որ ինքն բնությունը գեղարվեստական հրաշալիք մ'է:— Այս՝ բայց գեղեցիկը բնության մեջ աղոստ է ու խառնակ միանգամայն. մարդ զո՞ւտ մաքոր գեղեցիկը ըմբռնեկ, խոեալ գեղեցիկը: Ի՞նք հյուզ մը տիեզերքին մեջ, երկրորդ տիեզերը մը զգաց իր մեջ, կյանքով ու գեղեցկությունով լեցուն՝ զգացումներու տիեզերքը, սիրտը: Դուրս պոռովկալ ուզեց զայն, սա գեղարվեստը ծնավ իր զանազան ձևերուն մեջ:—

Տարտարապետությունը՝ բաղարակությալ երկիրը ծածկեց այնպա՛ն գեղեցիկ շներերով, և որ հողին երեսն երկինք արձակեց նվիրական այնքան տաճարներ, ժանյակին պես նրբանյուս, խունկի մուխին պես խորհրդավոր, աղոթքին պես երկնապաց...

Արձանագործությունը՝ որ աստվածները հերկիր փոխադրեց՝ անդրիներու ձևին տակ, որ կյանք տվավ անկենդան քարին, և որ մարմարին կարծր կուրծքը...\* սրտին է՛ն նրբին զգացումներովը:

\* անընթեռնելի բառ (ծ. խ.):

**Նկարչությունը՝** որ կտավի կտորի մը վրա պատկերացոց ամառնային վերջավուսի մը տիսրագին քայլայտմը, և մի քանի գոյցներու մեջ՝ Անժելուսի\* մը աղոթերգը թրթուացոց անո՞ւշ, խորհրդավո՞ր...

**Երածտությունը՝** գերազանցապես հոգիլոյն այդ լեզուն, երկնեց այդ բարբառը, հորում ձայնը արցունք մը Կ'ըլլա, թրթուումը՝ հափշտակություն մը, նոթը՝ անհունությո՞ւն մը...

**Բանաստեղծությունը՝** արվեստներու շնաշխարհիկ այս դշխոյն, որ բառը խոեացոց՝ տպով անոր գոյցին հմայքը ու խազին անհունությունը, որ իր քնարին թրթուումներովը երկինքները դղրդեց, և որ գեղեցկին երգովը հրապորելով մարդկությունը՝ իր թևերուն մեջ՝ բարձրացոց զայն վեր, միշտ ավելի վե՛ր, խուալին մոտ...

**5. Բարոյական.**— Անվալսաիկ այսպես ընկերություն, կրոնք, գիտություն, գեղարվեստ, իրենց չափովը մարդուս բարյություն տվին, և կյանքին՝ ազնվություն։— Այլ ի՞նչ է մարդը, ի՞նչ է կյանքը կիարցնենք։

Անծանոթ ձեռքն մը հողին վրա նետված, անծանոթ ձեռքն մը հողեն խլված այդ մարդը իմա՞ստ մը, նպատակ մը, չ'ունե՞ր արդյոք։ Կյանքը վաղանցիկ բռակ մը օրորոցին և դագաղին միջն՝ չ'ունե՞ր միթք նշանակություն մը։

Անհունությո՞ւն մը ժամանակը, անհունությո՞ւն մը միջոցը. ու մարդ իյո՞ւն մը այս երկու անհունություններուն մեջ կորաված. անհունությո՞ւն մը և այդ իյովեն...

Ո՞վ և ինչո՞ւ դրած էր այդ անհունությունը մարդուս մեջ։ Իմանալու գգալու, կամելու այդ աշխարհները պետք չէ՞ր որ ողբորջն մը՝ կետ նպատակի՝ մը՝ օրենք մ'ունենային իր մեջ։— Այո՞ւ, մտածե՞ց մարդը։ Իր մտածումը դո՞ւրս նետեց կյանքի անձուկ եզրերեն, դո՞ւրս նորիի այս աշխարհեն, ու անհունեն, բացարձակին մեջ գնաց հարցել իր մեծ «ինչու»-ն կյանքին, մարդո՞ւն «ինչո՞ւ»ն...

Ու կատարյալը միջոցին մեջ արտասանեց մեծ «ինչո՞ւ»ին պատասխանը։— Ի՞նչ պատասխանած էր անիկա ու ի՞նչ կրկնած էին դարերու մեջ անոր արձագանքները։— Անկատար մարդը չ'ըմբռնեց կատարյալին ձայնը. Աստված մը միայն կրնար զԱստված հասկան։ Ծատե՞ր մեկնիլ ուզեցին խորհրդավոր ու վսեմ այդ ձայնը, ու զանազան ժամանակաց մեջ բարյականի զանազան ուղղություններ տրվեցան մարդուն։

\* Առավոտյան, կեսօրվա և երեկոյան զանգահարություն կամ հրեշտակ տեսան՝ աղոթք (ծ. Խ.):

Հնդիկ իմաստունը՝ Սաքիամունի՝ մահվան մեջ գտավ կյանքին գաղտնիքը: Ամեն իղձերու անեացումը քարոզեց ան Նիրվանայի գըր-կին, Եթե ընկդմումը Մեծ ոչինչ-ին մեջ, մահվան բոյնը՝ կյանքին խկ բաժակին մեջ...

Սրիստիպառու բոլորովին ներհակ բարոյական մը պատվիրեց, որ սակայն միևնույն վախճանին պիտի հանգեր շա՛տ ուշ. հաճովքին բարոյականը որ ծողովորդներ ամբողջ անասնական կիրքերու տիդ-մին մեջ ընկդմելել վերջ՝ մահախրատ վարդապետներ պիտի հարուցաներ իր եսուն:

Ուրիշներ՝ քիչ մ'ավելի բանակոր՝ մտածված հաշված հաճովքի, շահո՛ բարոյականը բարոզեցին, բարոյական մը որ հետզինետն բարեփոխվելով հասավ մինչև մեր ժամանակը:

Բարոյականներու մթին այս բարուն մեջեն ձայն մը՝ օրենք մը՝ պատվեր մը կծներ. մեծ Քանիդին ձայնն էր այն, պարտքին ձայնը: Ո՛չ, պատառ մը հացի՝ ունպ մը հաճովքի համար չէ՛ր որ ծնավ մարդը: Չե՛, շահու հաշվին համար չէ՛ր որ Աստված դրած էր անոր մեջ իր ձայնը, խի՛նճը:

Մարդ տիեզերքին մեջ ամենն ավելի վսեմ զորությունը կկրեր հինքյան, Անձը. ու այդ անձը հավասարապես բարձր վախճան մ'ուներ, պարտքը. պա՛րոքը իր անձին հանդեպ, պա՛րոքը այլո՛ց անձին հանդեպ, պա՛րոքը Աստուծն անձին հանդեպ. Պա՛րոքը օրորոցեն մինչև գերեզման, ու պա՛րոքը գերեզմաննեն ալ անդին... Հավիտնակա՞ն, անմա՞ն, վսեմ Պարտքը...

### 3. Ապագա մարդը

**Հառաջադիմությունը.**— Քաջալերիչ չէ ակնարկ մը նեստել անցելովն վրա, ու պատմության տուրաքանչյուր էջերուն մեջ մարդկության հառաջադիմությունը կարդալ՝ մեն մի մարզերուն մեջ զորս թվեցինք և որոց մեջ մարդկության բազերը իրարմէ ալինի հաստատոն և բեղմնավոր եղան, մինչև որ մարդուն հասավ Ընկերության, Կրոնքի, Գիտության, Արվեստի և Բարոյականի արդի զարգացյալ ձևերուն:

Այլ որքա՞ն ավելի միսիթարական պիտի ըլլար թափանցիլ ապագայի մթություններուն մեջ, ու հոն՝ մարդը տեսնել իր բոլոր կարելություններովը:

Գուշակությունը չէ՛ տրված մարդուն. այլ մարդ կրնա անցելովն ուստմնասիրությամբ օրենք մը գտնել, և ի կետ արկանել զայն ամեն ժամանակներու համար: Ի՞նչ պիտի ըլլա այս օրենքը՝ եթե ոչ Հառա-

**Զադիմությունը:** Նա՛ տիեզերքին օրենքն է. նա՛ մարդկության օրենքն է:—

Տակավի՞ն պիտի հառաջադիմն որենն մարդը.— Անշո՛ւտ. և այն հառաջադիմությունը՝ զոր տեսանք քարայրներու դարեն մինչև մեր ատեն՝ Վատահարար ոչի՞նչ բան մըն է անո՞ր բաղդատմամբ զոր ունինք իրագործելու ապագային մեջ: Ծամբան զոր—մի՛շտ բարեփոխվելով—կտրեցինք անցանք դարերու մեջն, ապահովարար առաջին քայլն է միայն հառաջադիմության այն անվախճան սանդուխին՝ որոց գագաթը անհուններու մեջ կ'երթա կորպվիլ:

**Գիտություն—** Այս հառաջադիմության ամեննեն ավելի զորավոր գործիքներեն մին՝ գիտությունը պիտի ըլլա. իմաստափրությամբ հասած այս վիճակին՝ անո՞վ պիտի բարձրանան հավետ, ու պիտի բարձրացնեն մարդը: «Մարդը—կ'ըսէ Հերպերդ Սրենսեր—պիտի գիտնա օր մը հայատեսել ապագան, ո՛չ թէ հաշիվներով՝ այլ բնականորեն, գիտությունը իրեն համար ըլլալով տիեզերական բնազդ մը: Ծանչնալով բնությունը՝ պիտի կառավարե զայն. նա իր թշնամին չ'պիտի ըլլա այլս, այլ իր սպասավորը: Ու տառապանքը տակավ պիտի վանվի երկրեն: Ապագայն պիտի լինի պատշաճումը մարդուն ի մարդ, մարդուն ի բնություն, վախճանը ամեն թշվառությանց, և հանդարտությունը ամեն ատելության: Տիեզերական երանություն...»:

**Կրոնք և գեղարվեստ.—** Բայց մարդը պիտի հասնի՝ վերջապես բացարձակ գիտության.— Ո՛չ. իր գիտությունը սահմանափակ պիտի ըլլա ամեն ատեն, ու միշտ գոյություն պիտի ունենա Անճանաչելին՝ որ պիտի ծիծաղի մարդու ընդունայն ճգանց վրա: Ապա և մի՛շտ գոյություն պիտի ունենա Արվեստն՝ ա՛ն միայն կարող մարդուն հուահատությունը փարատելու և անոր ոգին տեպականով միխթարելու, և մի՛շտ Կրոնքը՝ մարդուն երկրուղածության ու հարգանքի պաշտամունքը մատուցանելու համար խոժող Անճանչելվուն:

**Ընկերություն և Բարոյական.—** Սակայն մարդուն ճշմարիտ հառաջցումը պեսոք է փնտոել իր Բարոյականին մեջ: Ապագայն բարյականին հաղթանակը պիտի ըլլա մանավանդ:

«Տիեզերական եղբայրակցության» մեծ պատվերը՝ դարերու ժյուրին մեջ կրուզած՝ իր բոլոր սաստկությամբը լսելի պիտի ըլլա ամենուրեք, ու իրար կապելով ընկերության անջատ մասերը՝ պիտի կազմն հոծ, ներդաշնակ միություն մը, Մարդկությունը: Ազգերը այս մեծ ընտանիքին անդամները պիտ լինեն սիրակցորդ. Հայրենիքները ջերմին, նլվուն բույներու պես պիտի ըլլան: Թշնամության ատելության՝ վրի-

ժառու ժանու փուշերը արմատախիլ պիտի կորնչին ժողովուրդներու սրտներուն մեջ:

Ա՛ թնդանոթը քար ու քանդ չ'պիտի ավերե լուսողող քաղաքները. ա՛ լ բոցերը չ'պիտի լափլիզեն կյանքով լեցուն երկիրները, ա՛ գընդակը չ'պիտի շաշե կուրծքերե ներս...

Խաղաղության կենսավետ ստվերին մեջ ու ազատության ջերմին երկնքին տակ՝ ազգերը բոլոր պիտի երթան իրենց ուժերուն պատառագը մատուցանելու միշտ՝ իրականացող Գաղափարին նվիրական խորանին վրա:

**Ռուբեն Զիլինկիրյան**

**Վերջ**

## ԱՐՅՈՒՆՔՈՏ ԽՈՍՔԵՐ

հրաժեշտի ճառ

1905  
Ալյուտար-Դերպերյան

Արցունքու խոսքեր  
—Հրաժեշտը—

Հասած է ժամն, պետք է մեկնիլ, գնա՞լ հեռու..  
Օրերն բղոր անցան գացին հեշտագին,  
Տարիներն ալ հաջորդեցին իրարու՝  
Արա՞գ և քաղցր՝ զեփյուին պես գարնային...  
Հասած է ժամն, պետք է մեկնիլ, գնալ հեռու:

Երեկ դեռ փոքր՝ նորեկ տղեկ էինք հոս.  
Ծամրան երկար, ու ապագան մոայլ էր:  
Ժամանակը՝ առվակին պես մեղմանու՝  
Գրեկց զգմեզ առաջնորդեց մեր քայլեր:  
Երեկ դեռ փոքր՝ նորեկ տղեկ էինք հոս:

Հիմա հասած ենք մենք ճամբուն վախճանին.  
Ա՛ չիք մեր քայլն հառաջ մղող շարունակ.  
Մեզի համար դաս ու համար վախճանին,  
Ու հրաժեշտ ժամը հրնչել տիսրունակ...  
Հիմա հասած ենք մենք ճամբուն վախճանին:

Ծամփորդին պես որ գագաթեն կդիտէ  
Կողը բլուզն ուղ մագլեր քիչ առաջ,  
Փշոտ ուղին ու դաշտերն ալ մարմանդն,

Ու բերկրանքեն՝ կործքեն թոփ լայ յն հառաշ.  
Ծամիդորդին պես որ գագաթեն կդիտե:

Հոգմամբ լեցուն նայվածք նետենք մեր ետին՝  
Զաղիվերի՞ն որ թա՞ց է դեռ քրտինքով...  
Հին նիշատակը կիսուին շե՛շտ մեր արտին.  
Ու մեր աչեր լենան դա՛ոն դա՛ոն արցունքով...  
Հոգմամբ լեցուն նայվածք նետենք մեր ետին:

Ի՞նչ քաղցր էր կյանքն որ սուրբ հարկիս մեջ անցավ.  
Աշխատովյա՞ն, խոկունք, երա՞զ, երգ և հո՞կո,  
Սառնեք ահա եղան մեր կյանքն որ անցա՞վ  
Ու երշանի՞ն արշավ մըն էր դեպի լոյս  
Ի՞նչ քաղցր էր կյանքն որ սուրբ հարկիս մեջ անցավ:

Այս սուրբ կյանքին հասավ ահա ժամն հետին.  
Ու այդ ժամուն բոպեները համրորեն  
Կըալքային, կփշրվին, կ'անհետին...  
Սրյունոտած սրտով հրաժե՛շտ տանք իրեն.  
Այդ սուրբ կյանքին հասավ ահա ժամն հետին:

Հրաժե՛շտ, հրաժե՛շտ... Հրաժե՛շտ հարկիս հավիտյան,  
Սիրո շերմ բոյն՝ ուր մենք թոշնիկ երգեցիկ՝  
Մեր մայր թոշնեն առինք շամբերն գիտովյան  
Եվ սովորեցանք լոյսի վեհ երգն գեղեցիկ:  
Հրաժե՛շտ, հրաժեշտ... Հրաժե՛շտ հարկիս հավիտյան:

Հրաժեշտ անո՞նց ուր կյանքն անցավ հեզասահ.  
Սենյակներուն, սեղաններուն, սրահներուն.  
Անոնց վրա՝ են մերին կյանքին շիթերն, ա՞ն...  
Հրաժեշտ կուտանք անոնց ձայնով կերկերուն,  
Հրաժեշտ անոնց ուր կյանքն անցավ հեզասահ:

Հրաժե՛շտ մեր մյուս ընկերներուն դեռ փոքրիկ—  
Անոնց հետ նոյն կյանքն ապրեցանք եղբոր պես,  
Վայելեցինք գգվանքն ու սերը գողտրիկ  
Միևնույն հայր պաշտպանի մը սիրակեզ...  
Հրաժե՛շտ մեր մյուս ընկերներուն— դեռ փոքրիկ:

Հրաժեշտ ձե՞զ ալ, բարերարներ մեր մտքին,  
Դուք, ուսուցիչը, դո՞ւք պաշտոնյայք անձնվեր  
Հառաջացման, զարգացման վեհ խորանին...  
Մեր խորհուրդին հոմիկու տվիք դուք թևեր:  
Հրաժեշտ ձեզ ալ, բարերարներ մեր մտքին:

Հրաժե՛շտ և քե՞զ, քե՞զ մանավանդ Մեծ Վարպետ,  
Որ մատներուդ մեջ ձևեցիր մեր հոգին  
Հողի կրքերն դուն դարձուցիր հոն անհետ,  
Փոխան դրիր ինչ որ կար ձե՛ր սրբ անգին...  
Հրաժեշտ և Քեզ, Քե՞զ, մանավանդ Մեծ Վարպետ:

Հըրաժե՛շտ Քեզ, երկնատաք Վեհ Գործավոր,  
Որ գրիշիդ, լեզվիդ ճարտար մորթին տակ  
Ու դպրոցիդ սպին վրա փառավոր  
Կուցիր մեզ ու դարձնեցիր շարունակ...  
Հըրաժեշտ քեզ, երկնատաք Վեհ Գործավոր:

Հրաժե՛շտ Քեզի, վըսեմ մշակ բանավոր,  
Որ նետվեցիր խոպան արտը մեր մտքին,  
Խլեցիր անկէ փուշն ու տատակ թունավոր,  
Ու դրիր սերմերն Ուղղվույն, Բարվույն, Գեղեցկին...  
Հրաժեշտ Քեզի, վըսեմ մշակ բանավոր:

Բյո՞ւր, բյուր հրաժեշտ... Հրաժե՛շտ տանը Քեզ տրտմագին  
Աշքերնին լի են արցունքով, ա՞հ, ամեն  
Բաղի կ'զգանք թե կփղձկի մեր հոգին.  
Ու մեր ձայնը չ'իշխեր ըսել հոգումեն՝  
«Բյո՞ւր բյուր հրաժեշտ... Հրաժեշտ տանը քեզ տրտմագին»:

Այլ Է՞ր այսքան խոր մեր սիրտը կհուզի.  
Լոկ մեր մարտին պիտի երթա քեզմե քաց.  
Հոգին փարած պիտի մնա միշտ Քեզի.  
Քո հիշատակ պիտի ըլլա անմուաց...  
Այլ Է՞ր այսքան խո՞ր մեր սիրտը կհուզի:

Ո՞հ ապագա կարուն է որ մեզ խոռվե,  
Նախազգացված հեռվի կարուն սիրագին.

Կարոտն սրտիդ որ համակ մեր, գորով է,  
Կարոտն լուսով, լուսով լեցուն քո մտքին...  
Ո՞հ ապագա կարոտն է որ մեզ խոռվե:

Զավակներու պես ոքք տունեն հեռանան,  
Մընանք տրխոր, ու գլխաճակ, մտածկոտ...  
Դաժա՞ն, մըթի՞ն մեզ կդիտե ապագան.  
Անառաջնորդ դողդողին քայլք մեր կըթու,  
Զավակներու պես որ տունեն հեռանան:

Տե՛ր, Դո՞ւ մեր մեջ դըրիր պապակն ուսմունքին.  
Գիտության կիրքն անզուսաց մեր մեջ դո՞ւ ծընար.  
Տալու համար մեզ զարգացման սերն անզին՝  
Գործածեցիր ամե՛ն միշոց, ամե՛ն հնար:  
Տե՛ր, Դո՞ւ մեր մեջ դրիր պապակն ուսմունքին:

Այդ պապակին հագուրդ տալու անկարող  
Քանինե՞ր կան ոքք կհեծին անպաշտպան.  
Ո՞հ, քանիներ չունենալով միշոց, փող,  
Ուսման սիրույն անմեղ զոհերը կ'ըլլան  
Այդ պապակին հագուրդ տալու անկարող...

Վա՞խ, վա՞խ, ոքքա՞ն բոցք գիշերին մեջ մարին...  
Ի՞նչ հանձարներ անօգնական կմնան...  
Խամրող ծաղկին ուսնաք պուտ մը ջուր տարին,  
Իսկ մյուսներուն ձեռք մը չ'ելլեր օգնական...  
Վա՞խ, վա՞խ, ոքքան բոցք գիշերին մեջ մարին:

Անոնց խնամքն հանձնինք հոգվոց բարերար,  
Անո՞նց որոնք բարեկամ են ուսմունքին.  
Ու Քե՞զ ապա որ այդ մանկանց մեջ ծընար  
Ուսման սիրույն լափիզող բոցն ջերմագին:  
Անոնց խնամքն հանձնինք հոգվոց բարերար:

Զեզ մանավանդ հոգվոց մեր հայր աներման,  
Վարժարանաց Դո՞ւք վեհ պաշտպան հրթեշտակ,  
Զե՞զ կհանձնինք այս մանկըտին անպաշտպան՝

Զի խնամեք զայն Ձեր գգվոտ թևոց տակ...

Ձե՛զ մանավանդ հոգվոց Հայր աննըման:

Հասած է ժամն, պետք է մեկնիլ, գնա՞լ հեռուն.

Օրերն բոլոր անցան գացին հեշտագին,

Տարիներն ալ հաջորդեցին իրարու՝

Արա՞գ և քաղցր՝ զեփյուրին պես գարնային...

— Հասած է ժամն, պետք է մեկնիլ, գնա՞լ հեռու...

**ՈՌԻԲԵՆ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ**

## Զույգ ծառերը —այլաբանորեն—

Տնօրենիս Ռ. Հ. Պերպերյանին,  
իր մեռած կողակցին և հիշատակովը:

Հեռո՞ւն, անծիր դաշտին վրա, գետին քով,  
Մենավորիկ զույգ մը ծառեր կանգնին վեր.  
Ո՞հ, երկուքն ալ զիրար սեղմած գուրգրանքով՝  
Ու կուրծք կուրծքի իրարու սերտ փաթտղվեր,  
Հեռուն, անծիր դաշտին վրա, գետին քով:

Մին բարձրագեղ, լայնհովանի կաղնի մ'է,  
Այլ լո՛տ, տրտուս ճուղերն հակած դեսի ցած.  
Զի ինչ որ ինք բազկացը մեջ կսեղմէ  
Հոր շանթեն մը ջախջախ բուն մ'է ածխացած:  
Մին բարձրագեղ, լայնհովանի կաղնի մ'է:

\* \* \*

Ո՞հ! երջանիկ քաղցր օրերը վաղանցիկ,  
Ուր երկուքն ալ մատղաշ էին նորրհասակ,  
Կանաչներու մեջ պանուճլած գեղեցիկ,  
Եվ գըլխոց վրա թռչնոց ծաղկանց վեն պրսակ.  
Ոհ! երջանիկ քաղցր օրերը վաղանցիկ!

Իրար համար կարծես նողեն ծրլած վեր,  
Բունը բունին հարած էին ոժգնորեն.  
Ու ճուղերն ալ իրարու մեջ փաթտղվեր՝  
Սիրու մրմունչքը կ'երգեին քաղցրորեն,  
Իրար\* համար կարծես նողեն ծրլած վեր:

\* Մոտավոր թթվերցում (Ճ. իւ.):

Երբ քաղցրասյուք գեփյուոն փըշեր մեղմաշունչ՝  
Ծրբունք շրթան տերկը համբուլը փոխ տային,  
Մրմնջեին ռատերն քացրիկ ի շըշունջ  
Իրենց անման սիրովն երգը երկնային,  
Երբ քաղցրասյուք գեփյուոն փըշեր մեղմաշունչ:

Իրենց ներքև՝ լայնատարած շուրին տակ՝  
Բազմագունակ կծըլեին ծաղիկը բյուր.  
Ու արմատին մոտ կարկաչեր մի վըտակ՝  
Հորդահոսուն թափակելով ալիքն յուր,  
Իրենց ներքև՝ լայնատարած շուրին տակ:

Երանությամբ լենոր իրենց գույգ հոգին  
Երբոր իրենց ռատերուն մեջ հաստատված  
Բյուր թըշնիկներ դայլալիկին քաղցրագին  
Սուավույան իրենց երգերն առ Աստված.  
Երանությամբ լենոր իրենց գույգ հոգին:

Ո՞հ, երջանիկ էին անոնք հիրավի:  
Միշտ սեղմելով իրարու կուրծք չերմագին՝  
«Ո՞հ թե տեեր» կհճճեին յուրովի:  
Ս' վախճան մը, վա՞խ, պատրաստ կար այս կյանքին...  
Ո՞հ, երջանիկ էին անոնք հիրավի:

\*\*\*

Օր մը երկինք ծածկեցին մութ ամպեր,  
Ու սարսացին զվարթ ալիքն վըտակին.  
Հյուսիսն գոռ փոխորիկ մը կփըշեր՝  
Սպանալից սուր վայունով տրիսրագին:  
Օր մը երկինքը ծածկեցին մութ ամպեր:

Շառերն իրար պլրվեցան վախ ի սիրու  
Մթներ երկինքն, նովը տակավ բորբոքեր.  
Ու վըրիժուց ձայն կ'արձակեր վայրա՞գ, բի՞րտ  
Սուր ամպերու մեջնեն վայլակը ժաղթքեր:  
Շառերն իրար պլրվեցան վախ ի սիրու:

Խո՞յ, խո՞յ գոյցուն մը պայթեցավ ահագին,  
Ու ժանտ շանք մը մըթին ծոցեն ամպերուն՝  
Զարկա՞վ, ավա՞ղ, անհետացոց ծառաց մին:  
Երշանկությունն ա՞լ խուս տված էր հեռուն...  
Խո՞յ, խո՞յ գոյցուն մը պայթեցավ ահագին:

Ռոպէ մը վերջ սև հարվածեն կալծակի,  
Երբոր ընկերն փաթտեց ձեռքերն յոր տըկար՝  
Իր բազկաց մեջ ա՞լ անզգա անզգի՝  
Ածուխի սև, չորցած, խանձած կույս մը կար,  
Ռոպէ մը վերջ սև հարվածեն կալծակի:

Ցուրտ սարսուն մը ցնցեց հեգ ծառն այն ատեն.  
Վար կախվեցան բոլոր ճողովերն ի խոր սուզ.  
Արյունող տեգն էր որ կ'անցներ իր սրտեն:  
Երկինքն իսկ հորդ թափեց վըշտի արտասուր...  
Ցուրտ սարսուն մը ցնցեց հեգ ծառն այն ատեն:

Արդ տարիներ անցած են այդ սև օրեն,  
Բաց դաշտին մեջ մընա հեգ ծառն միայնակ՝  
Ածիւն կմախքը դիտելով տըխորուն,  
— Թշվառություն, լա՞ցի կարծես նըշանակ...  
Արդ տարիներ անցած են այդ սև օրեն:

Բայց ո՞յր երգերն, ո՞յր դաշտայներն քաղցրագին,  
Ո՞յր թոշուններն որոնց ի՞նքն էր ապաստան,  
Ավա՞ղ, անոնք ի տես բույնին գարշ դեմքին  
Ե՞տ ե՞տ թըդին, սարսափահար խուս կուտան...  
Բայց ո՞յր երգերն, ո՞յր դաշտայներն քաղցրագին:

Թոշնոց բույներն բոլոր թափուր մընացին.  
Սուպիտյան անոնց ճիվճիվն ա՞լ չի կա:  
Լոկ՝ մերթ ընդ մերթ՝ սև ագռավ մը առանձին  
Հո՞ն հառաջի պես խոր տըխուր բան մը լա...  
Թոշնոց բույներն բոլոր թափուր մընացին:

Կարկաչանոս կայսոռող ո՞յր է այն վըտակ.  
Հիմա մեռած և անշարժ՝ կարծես չընթանա.

Ու ծառն անոր վըճիտ հայլվույն ի հատակ  
Իր ընկերոջ դիտե կմախըն, ու սարստա...  
Կարկաչահոս կայտող ո՞ւր է այն վըտակ:

Լոկ բան մը կա իր մոթ հոգվույն ի ափոփան,  
Նորատունկներն՝ ծլած իրենց արմատեն.  
Ոմանք մեծցեր են նորդիասակ վարդանման,  
Հազիվ ծլած մեկն ալ խամրեր է արդեն...  
Լո՞կ բան մը կա իր մոթ հոգվույն ի ափոփան:

Ամեն անգամ որ հով մ' մաղլի ճյուղերեն,  
Դողդոչ ծառն ու իր ոստերն հոգեվար  
Խով ու խորունկ ողբ մը հօծեն տրտմագին,  
Եվ տերև մ' ալ հյուծա՛ծ փրթի կ'ինա վար՝  
Ամեն անգամ որ հով մ' մաղլի ճյուղերեն:

Որի՞ դիմել, որի՞ գոչել զայրագին:  
«Տըվե՛ք իԱծի երջանկությունն, հրճվանքն իմ.  
«Ո՞ն պաշտելի ընկերն տվեք իմ կյանքին.  
«Տըվե՛ք, տըվե՛ք, առանց անոր կմեռնիմ...»:  
Որի՞ դիմել, որի՞ գոչել զայրագին:

Վա՛յ դու կո՞ւր բաղդ, ճակատագի՛ր անգիտակ,  
Ո՞ր անարդար ձեռքը Շետեց հոս ձեզի:  
Վա՛յ ժանու մահվան հիմար անգութ հըրեշտակ,  
Ո՞վ հանձնեց ձեզ կյանքի մանգաղն երկսայրի...  
Վա՛յ դու կուր բաղդ, ճակատագի՛ր անգիտակ:

Մա՛ն, ահավոր զորություն մը դա՛ռն կատակ:  
Վա՛խ, երազե՛լ, սիրե՛լ, տենչա՛լ ու գրկե՛լ,  
Եվ բազկաց մեջ գրտնել մոխի՛ր փրլատա՛կ...  
Ե՞՞ր չըրողուս վայլել մեր սերն անարգել՝  
Մա՛ն, ահավոր զորություն մը դա՛ռն կատակ:

\*\*\*

Հեռո՛ւ, աճծիր դաշտին վըրա, գետին քով,  
Մենավորիկ զոյգ մը ծառեր կանգնին վեր.

Ո՞հ, երկուքն ալ զիրար սեղմած գուրգրանքով  
Ու կուրծք կուրծքի իրարու սերտ փաթտղվեր՝  
Հեռո՛ւն, անծայր դաշտին վըրա, գետին քով:

Մին բարձրագեղ լայնահովանի կաղմնի մ՛է,  
Այլ լո՛ւտ, տղխոր ջուղերն հակած դեպի ցած.  
Զի ինչ որ ինք բազկացը մեջ կսեղմն՝  
Հուր շանթե մը ջախջախ բան մ՛է ածխացած...  
Մին բարձրագեղ լայնահովանի կաղճի մ՛է:

**1904 Հոկտեմբեր? (ապաց)**

**Սկզբուտար-Պերպերյան**

**ՌՈՒԲԵՆ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ**

## Աշուն —Հուշեր—

Կ'անձրւեր հար ծոցեն մըթին երկընքին  
Անձրւի շիթք կ'իյնան արագ տրտմագին,  
Կ'իյնան անդուզ ու անդադրում, մըշտահո՞ւ:  
Վաղիվ արդեն պարտեզին մեջ հոն ու հոս  
Անձրւի փոքր աղվոր լիճեր կազմվեր են,  
Ու առվակներ խոխոչալով գաճ վերեն  
Սփոռկու լայն պարտեզին հարթ երեսին՝  
Զորի ցանցեր որք դեպի լիճք կհոսին:

Կ'անձրւե միշտ, կ'անձրւե խո՞լ, անդադրում.  
Ու անձրւի խարազամին տակ տըրտում  
Կոծին ծառերն անպատշապա՞ր, կիսամե՞րկ:  
Դեղնած տերև մ'փրտի կաղնվույն ծայրեն լերկ  
Ու իջանի պտույտներով կ'իյնա վար,  
Մեր հուսոց պես որք կորընչին հողմավար:  
Տանձենին չոր ոստերն ցըցէ չորս կողմեն,  
Մինչ հոն թուփ մը կըծկըտեր է սոսկումեն:

Ու կ'աձրւե: Այլ ու նոճին հոն տեսե՞ք,  
Որ մի՛շտ դալար, մի՛շտ գեղեցիկ՝ կանգնի սեգ.  
**Մշտենչենին** խորհրդանիշն է գոգես  
Գլուխն ի վայր՝ մի՛շտ որբացող, տըրտմերես  
Իր դըրացի եղբարց համար հոգեվար  
Կուլա անի՝ երք գագաթեն մինչև վար  
Անձրւի: Զինջ նորք կայլակներ կթափին  
Ծյուղե ի ճյուղ, ոստերն հոստ, մինչ՝ գետին:

...Ու կ'անձրևն. և անձրևի շիթք ուժգին  
 Կողան վերեն, կրաղլիին մեր տանիքին  
 Ու հորինեն նվազ մը խո՛ լ միօրինակ,  
 Ե՛րգը մահվան, դագաղին երգն տիսրունակ...  
 — Լա՛ց, Բջնություն, լա՛ց, թող արցունքըն հոսին,  
 Գան զարնըլին պատուհանի երեսին,  
 Եվ նվագեն, ինծի, երգ մը ողբագին...  
 Լա՛ց, զի քեզ պես, ա՛հ, լալ կուզեն իմ հոգին...

Անձրևոր մ'էր, աշնան այս օրվան հանգույն,  
 Երբ՝ նիհարցած բոլորվին ու անգույն,  
 Անկողնույն մեջ՝ ուր շատոնց է կապուկեր  
 Եվ ուր անգութ հիվանդության մ'եղավ կեր՝  
 Փակեց անի աղվոր աչերն մահվան դեմ...  
 Քահանայներ, հողարկավորք սըգադեն,  
 Ու ձայնավորք շապիկ հագած վըրանին,  
 Տարի՝ ն զանի. անկե ի վե՛ր չքերին...

Երբ երկուքս ալ փոքրիկ էինք տակավին,  
 Պարտեզին մեջ կկայտուեինք անձրևին.  
 Զեռվնիս մեկ փայտէ փոքրիկ գալազան,  
 Ցեխ պատերով կշինեինք ալազան.  
 Ու անձրևի գետակներեն ես ու ինք՝  
 Արվեստական շա՛տ ջրվեժներ կազմեինք.  
 Եվ կամ հաճախ կրաշեինք գետն ի վեր  
 Թուղթն շինված փոքրիկ սիրուն նալակներ:

Նոյն անձրևն է որ շարունակ գա հիմա,  
 Կիրկնվին նոյն տեսարանք հոգենմա.  
 Գետերն երակ երակ հոսին ի սարտեզ,  
 Նոյն ջրվեժներն կկազմվին փրփրադեզ.  
 Նոյն պարտեզին մեջ լընակներ հոն ու հոս՝  
 Կկազմվին գետակներեն մեղմահոս.  
 Նոյն աշունն է որ ամեն ամ գա հարկավ.  
 Անի գնաց, հե՞ք եղբայրս, բայց ա՛լ չեկալ...

1903. Հոկտ. 27 (Երիցազոյն)

Սկզբունք-Պերպերյան

Ռ. 2ԻԼԻՆԿԻՐՅԱՆ

## Մահ Ալարիկա

Զորականներն մընան սառա՞ծ, լուռ, կանգուն.  
Դիտեն ապշած՝ Ալարիկոսն ահարկո՞ւն,  
Պետն որ պառկած երեսի վրա ի գետին  
Քաջի կյանքին ավանդէ շո՛ւնչըն հետին:  
Մայրիին պես հըսկայագեղ դարավոր,  
Զոր փոթորկի մը սաստկաշունչ ահավոր՝  
Արմատախիլ փրռէ լերան կողին վրա.  
Սյսպես ահա ինկած անի կարսոս,  
Կդողդոչէ ու կարսոս այն որ, ա՞ն,  
Ամենուրեք լալո՞ւն, արյուն սըփուց, մա՞ն...

Այլ Ալարիկ կանգնել կուզե տակավիհն.  
Ցընցըլին ջիղքն, անոամք բոլոր կըծկըլին.  
Այլ հազի՞վ թէ արմուկին վրա բարձրացած՝  
Կ'ինա նորեն՝ ոյժերն բոլոր ըսպառած:  
Ո՞ն, այն ատեն հուր աչերեն բոցք ցայտեն,  
Երկար հառաշ մը կպոռթկա իր սրբուն  
Մա՞ն այտերեն կ'անցնի երակ մը հուրի,  
Փրփրակուտակ պյաց պես կուրծքն յուր ունի.  
«Վա՞խ, հառաշե, ո՞ւր եք ոյժերս, զիս թողի՞ք.  
«Բորբոքի վրեմս, ու գալարին իմ աղիք.  
«Հուտին կանգնիլ կուզեմ, բազուկս զիս խարե,  
«Ու սրունքներս բնավ, չեն լըսեր զիս բարե՞..  
«Այլ հո՞ն է այն, միշտ հո՞ն է այն, կուրծքիս տակ,  
«Որ տանջէ զիս, որ կպոռա շարունակ,  
«— Հո՞ւր, բո՞ց, կ'ուզեմ, ոս՞ւըս արյան ծարավի».  
«Ո՞չ չեմ կըրնար... զորությունըս քայքայվի...  
«Դադրեցո՞ւր ձայնի, Ալարիկոսն ա՞լ չիկա...

«— Հո՛ր, քո՛ց կուզեմ, արյո՛ւն կուզեմ, ա՞ն չիկա»..»:

Կդադրի ձայնն, ու գորականք ապշահար՝

Իրենց պեսը դիտեն դաժան՝ անբարբառ:

Այլ ինչ որ այժմ Ալարիկեն կա միակ՝

Մսի կոյստ մէ, անշունչ՝ անզո՞ր մի դիակ:

Պյուզենթոյի\* ցամքած փուժին մեջ խորին

Սսպազեն պատկեր է Պետը լոին.

Եվ վիզիգոռք զոյզ ափանց վրա խըռնըված

Կան գըլխահակ, սըգատըխոր, երկյուղած:

Այլ ամբոխին մեջեն Արողք գա հառաջ,

Պետը դիտե, խոյս տա կործքեն մի հառաչ,

Ու զապելով արցունքն աշաց իր ետին՝

Լալահառաչ արտասանե բանքն հետին.

— Այսուհետև ո՞վ առաջնորդ, ո՞վ մեզ պետ.

Անդեկ՝ անզոյիս մեճք կորընչինք պիտ, հավետ:—

Այլ Ալարիկ չի բարբառեր, նա մոնչ է,

Իր արյունոտ շինուարդին մեջ նընջե:

Ինքն էր մերին հաղթանակաց տ՛սկ հոգին,

Տիեզերաց ի՞նքն էր սարափն ահազին.

Ու հիմա մեր արտավալից աշաց տակ

Կննչե ան՝ մեր վշտերուն անգիտակ,

Ու իր ձեռքի սուսերին ա՛լ անըզգա՛ ...

Օ՛հ, ողբացե՛ք, Ալարիկոս ա՛լ չիկա...»

Արտասկաց մեջ հետին բառերն խոր մարին.

Քա՛ր սըրտերէ խոլ հառաչներ կթընին.

Ու ահա՛ դառն հեծեծանաց, ա՛հ, մեջեն,

Պյուզենթոյի ջուրք ողբաձայն հառաչեն,

Ալարիկի ծածկեն մարմինն անվըրդով,

Սղեսաքեր հրամանի մը վրա փութով

Հազար գերի մեկեն նետվին ջուրերուն

Գետը տանի դիակն անոնց շա՛տ հետուն:

\* Գետակ խոպական Կոզենց նահանգում, որ սկիզբ է առնում Մոնտե-Կոկուց լեռան լանջերից, Կոզենց քաղաքի մոտ և միանում է Կրասի գետին: Ըստ ավանդության Բուզենտոն գետի հունի մեջ է բաղկած վեստորերի սրբա Ալարիկը (370—410):

Գիշերներու լուսթյան մեջ տիպունակ  
Պյուզենթոյի երբ ձայնն լըսիս գեղունակ  
Կամ փոթորկին հարվածին տակ մոլեգին՝  
Փրիրակուտակ ալյաց մոռնչն սաստկագին  
Այդ ձայներուն մեջ, Գոզենցա՝, գիտե՞ս ոք  
Ալարի՛կն է ոք մըռընչն ահավոր:

1904 նոյեմբեր ? (ավագ)

Սկսուտար-Պերպերյան

ԲՈՒԲԵՆ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ

## Քրոջս դամբանին առջև —Մեռելոցի առավոտուն—

Մեռելոցի առավոտը կծագի,  
Մեռելոցի կծնանի արշալոյս,  
Ե՞ր կննչես հողի փոսիդ մեջ անլոյս,  
Դեռ չի հասա՞վ միթե ժամը զարթոնքի...

Ո՞վ, մինչև ե՞րբ արցունքներըս հորդ փոսին,  
Ու դուն անխոս ննչես փոսիդ մեջ անձուկ.  
Այն հրեշտակը որ տարավ քեզ կամացուկ,  
Չըսա՞վ խոսք մը, բա՞ն մը արդյոք այդ մասին:

Չըսավ արդյոք թե քեզ տանի Արարշին,  
Ու Հիսուսի ճակտին քեզմով փոնջ հյուսէ.  
Եվ կամ վճռե՞ց անգըթորեն, ա՞յս, ըսե՞,  
Թե հավիտյան ուկորտիքըդ հոս հանգչին...

Սիրո՞ւն աղջկի, ի՞մըս քաղցրիկ հըրեշտակ,  
Մինչ ե՞րբ արդյոք ի պատասխան կանչերու,  
Պիտի շարժին չորցած դափնիքըդ... անհո՞յս,  
Ու պիտի հծին այս սղգացող այուքին տակ:

Գարնա՞ն ծաղիկ, խրտչո՞ն լացող մարդկանն,  
Ա՞ն քեզ ընկեր լացող թոշունն ու սյուքն այն.  
Դու որ ժափի կ'երազեիր, խի՞նդ միայն,  
Լաց ու արցունք նվիրեմ քեզ, ընդունե՛:

Մեռելոցի առավոտը կծագի,  
Մեռելոցի կծնանի արշալուս.  
Է՞ր կննջես հողի փոսիդ մեջ անլուս,  
Դեռ չի հասա՞վ միթե ժամը զարթոնքի:

1902, Ապրիլ (?) (Կրտսեր)

Սկզբունք-Պերպերյան

ՌՈՒԲԵՆ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ

## ՊԱՆԴՈՒԽԾ ՊԱՏԱՆԻԻ ՄԱՀ

Բարեկամիս՝ Պաղտիկին նիշատակին

1903

Սկյուտար-Պերաբերյան

Փոքր է սենյակն, սոսկումով լի, լուռ, մըթին,  
Միօրինակ կանգնին պատերը չորսդին.  
Չիկա մի ձայն, չիկա բնավ փղսափղսուք.  
Ամեն ինչ լուռ կենան թաղյալ ի խոր սուգ:  
Այլ մերթ ընդ մերթ լուրջան մեջ ամայի,  
Հոգենվարքի մե՛ղմ հառաշ մը կ'երկարի:

Մահճին վըրա՝ դողդոշ լույսով կանքեղին՝  
Մերթ ի հայտ գա հյուծած դեմք մը դեփին.  
Պատանվո դեմք մըն է անի, բայց ավա՛ն  
Ինչո՞ւ դիմաց խամրեր է վարդն այնքան վաղ,  
Ծրքանց բոլոր կարմիրները ո՞ւր են, ո՞ւր.  
Բանաստեղծի վառ աշերուն ո՞ւր է հուր:

Ախտ մը կրծեր, զինքն ըրեր է հոգենվար.  
Քիչ վերջ գուցե չի շնչեր ա՛լ, չհևար...  
Մահվան մոտիկ, ա՛ն շատ մոտիկ, նա հիմա  
Տեսիլքներու մեջը կ'ապրի հոգինա,  
Անո՞ւշ տեսիլք, ուրք փոխվելով շարունակ  
Անցյալ կյանքի հուշերն ածեն գեղունակ:

Հոգին սուզեր է հին անո՞վ օրերուն  
Տարտա՞մ, անհո՞ւն հեշտոթյանց մեջ օրորուն,  
Ու աչերն ալ հո՞ն, անկյունը գամվեր են.  
Առաստաղին, հո՞ն, անկյունը գան վերեն,  
Կուգան իրենց փոքրիկ հրեշտակը աննըման,  
Ու թոշնոց պես կճովողեն, կուգան ման:

— Անմե՞ն թըռչնիկը, հրեշտակը քնքուց ու սիրուն!  
Հրեշտակ մ'ալ ինք չէ՞ր եղած այն օրերուն,  
Ուր տակավին մանուկ անմեղ գեղունա՞կ,  
Իր եղբարց հետ պար կրոներ շարունակ.  
Ուր կար մայրը զինքն առնելով իր գըրկին,  
Կհամբուրեր այտքը. կըրկին ու կըրկին:

Դողդոց հառաջ մը կ'արձակն շըրթներեն.—  
Անհետանան փոքրիկ հրեշտակը ու վերեն  
Կ'իշնեն կուսանք շընաշխարհիկ, փափկաթն,  
Պարեն օդին մեջ գեփյուոին պես թեթև,  
Երգեն քաղցրիկ, միաբերա՞ն, հեշտավոր,  
Զայնով մ'անուց, լոկ զվարթնոց բնատոր:

Կողիտե շե՛շտ, կ'ունկնդրե լուռ, անբարբառ.  
Կ'անցնին աշացն իր առջևեն խոլաբար  
Իր պատանվո կյանքու օրերն, հո՞ւյսքն ոսկի...  
Սարսուն մը ցուրտ մարմինեն ներս սողոսկի.  
Հառաջ մը լայն թըռի հոգվույն իր խորեն,  
Ու տեսարանն անհետանա աչերեն:

Կմայի պի՛շ, նայի անշարժ, անքըթի՛թ.  
Այլևս շըկան կուսանք շըրճաղ դեռափթիթ,  
Այլ իրենց երգն, այն հըմայիշ երգն աղու,  
Կրպի դեռ միշտ մեկան՛չ, միշտ նեռո՞ւ.  
Ու կուսանաց տակավ նվաղող երգին նետ:  
Մարմիթ կենացն իր մոմ վըսիս նետգիտ:

Սակայն հանկարծ ճըռնչե դուռ սենեկին,  
Ներս կմտնե սևազգեաց մի պառավ կին,  
Մեղմ քայլերով կ'երթա կանգնի մահճին քով:  
«Այլ ո՞վ ես դու, գոչե նե՛քը սուկումով,

Ինչո՞ւ այսպես փաթթվեր ես սևերու,  
Սուկո՞ւմ քենե, գընա՞ ինձմեն դեպ հեռու»:

«—Հեռվեն կուգամ, հայրենիքեղ ես կուգամ.  
Մի մերժեր զիս, հոգվոյդ հովզերը կ'զգամ.  
Քու զյուղակեն, որու համար սիրակեզ  
Տոշորի սիրտո, ամեավ ողջովն բերի քեզ.  
Նորա լեռանց ասրեն ձորեն հիշատակ,  
Տե՛ս, ծաղկանց փունց բերի, պահե կուրծքիդ տակ»:

Աև ծածկոցին տակեն համեն փունց մ'աղվոր.  
Բայց ծաղիկները խամրեր են, ա՞հ, բոլոր:  
«— Ըսե ո՞վ ես, հիվանդն ըսե դողագին,  
Ծանոթ թվի ձայնըդ ինչի սիրագին,  
Այլ կիրտչի քենեն հոգիս, ո՞հ, երկշոտ.  
Մարմինդ համակ գերեզմանի բուրե հոտ»:

«— Մայրիկ՝ եմ ես, դժբախտ որդիս ծաղկանման,  
Կարոտդ շո՞ւտ իշեցոց զիս գերեզման.  
Մրտաճմիկ դառն հառաչներդ խոռվեցին  
Մահվան իմ քուն. հողի փոսին մեջ լըդին:  
Եկան որ քու դառն վիշտերդ դարմաշնմ.  
Բոլոր ցավոց տառապանաց դարման իմ:

Ծիծելամերձ մոմի պես է՞ր\* հաղեր ես,  
Խորշականոտ է՞ր թոռումեր է քո երես,  
Գեղածիծադ լիճն աշացդ է՞ր սառեր է,  
Նոցա մարմրուն հուրը ինչո՞ւ մարեր է,  
Խոսե՞ն, որդյակ, խո՞սք ինծի, է՞ր չըսես,  
Մոոցա՞ր արդյոք թե միակ պաշտպան մայրդ եմ ես:

«— Մա՞յր, մա՞յր... հիվանդն ըսավ դողդոց կիսանվաղ,  
Անգո՞թ, անհա՞գ որդեր կրծեն զիս ավա՞ն.  
Կուրծքիս տակ, հո՞ն, հո՞ն խորունկը սրտիս մեջ  
Կ'եփի անոուլ, կմըրըրկի հուր մ'անշեջ,  
Կլափե զիս, ու ամբողջ կյանքը լափե՛.  
Ասրի՛լ կուգեմ, շնչի՛լ կուգեմ, այլ բարե՛...

\* Էր— ինչո՞ւ (գրաբար):

Զեռքերս, ուտքերս անկողին գամվեր են.  
Կործքիս վլրա ճնշին հուժկու ձեռք վերեն,  
Ու կ'արգելուն որ շնչիմ: Ա՞ն, ե՛կ իմ քով,  
Թևերդ գըլխուս տակ տարածե գուրգրանքով  
Զի ծա՛նի է ան, ա՞ն, շատ ծանր է, կիյնա վար,  
Կապարի պես կճնշե ծա՛նի, չեմ կրնար...

Անգոյն ճակատս պաշարեր են վառ բոցեր,  
Փակվիլ կ'ողեն աշերըս, այլ չեմ գոցեր,  
Տեսնի՛լ կ'ուզեմ, տեսնի՛լ կ'ուզեմ տակավին:  
Ի՞նչ ծանր քուն է, ի՞նչ ծանրը քուն, Աստված իմ,  
Որ կճնշե ուժգին կերպով կոպիս վրա.  
Պարզ քուն չէ այս, կ'զգամ, հոգիս կարսոսա:

Զեռք մ'անձանոթ, ա՞ն մի վիշտապ ահագին  
Ոլոր ոլոր փաթթըվեր է իմ վըզին.  
Ծիգով խոսիմ, ու ամեն մեկ բառիս հետ,  
Կ'զգամ որ, ա՞ն, կյանքիս մի մաս թոյի անհն՝ ոտ...  
Սակայն խոսի՛լ, դառ բարբառել կ'ուզիմ ես,  
Սրտիս թագուն վիշտը պողոթկալ կ'ուզիմ քեզ:

Ա՞ն, նվաղի՛մ, ոյժերս բոլոր զիս թողին,  
Այլ չեմ ուզեր նետվիլ գիրկը սև հողին.  
Սարի՛ կ'ուզեմ, լըսե՛ երգը կույսեղուն  
Ա՞ն, քաղցր է ան, շա՛տ քաղցր ան, այլ հեռուն:  
Ծնջիլ կ'ուզեմ, շնջի՛լ կ'ուզեմ մինչեւ որ  
Արշալույսին լուսը տեսնիմ փառավո՞ր»:

Ա՛լ չեր խոսեր, հատավ յուր ձայնն: Այն ատեն,  
Պատուհանին վրայեն կարծես, շա՛տ մոտեն,  
Բու մ'իր տիտ՝ որ, շարագոյշ երգը լացավ:  
Հեռվե հեռու ձայն մ'աքլորի լավեցավ,  
Ու կ'ավետեր լուսին գալուստը բարի  
Այլ առա՛ջ որ իրե՛ւ համար չեր անի:

«Մայրի՛կ, մայրի՛կ, ձայնեց դողդոց, կմեռնի՛մ...  
Ա՞ն գրկե զիս, գրկե բազկիդ մեջ ուժգին.  
Երթա՛նք, երթա՛նք...»: Երթանց վրա ձայնը հատավ

Հետին Աշույլն աչերուն մեջ սառեցավ.  
Ծիծավ կյանքին բոցն իր վըտիտ երերուն...  
Կուսանաց երօն ալ վերջացեր էր հեռո՞ւն...

— Ո՞հ, հոգեառ հրեշտակն էր կինն այդ պառավ,  
Որ խաբելով խեղճին հոգին շուտ առավ,  
Ու դուրս պացավ պատուհանն զերթ փըքին.\*  
Ո՞ւր, ո՞ւր արդյոք պիտի տանի այդ հոգին.  
Ոչ ո՞ք գիտե. ինք ալ թերևս չի գիտեր,  
Եվ անհունի մեջ բայլամոլոր գնա անՏեր...

• • •

Առոտութ կանուխ, երբ սենեկին դուռ բացավ,  
Ծաղկահասակ գթության բույրը՝ լացավ....  
Մահճին մոտիկ վառեր կանթեղ տակալին,  
Ի՞իր դողդոց լույսն երերութկար մեղմովին  
Երեսին վրա հեգ պատանվոյն որ ավա՞ն,  
Մահվան բունը կընանար այնքան վաղ...

Ռուբեն Զիլինկիրյան

\* Փըքին — սլաք, նես:

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

(ծանրթագրությունների փոխարեն)

1905 թվականին, Սկյուտարի Պերպերյան վարժարանի բանամյա շրջանավարտ Ռուբեն Չիլինկիրյանը, որ 1908թ. սկսած պիտի հանդէս գար Ռուբեն Սևակ ծածկանունով, հավաքել է իր գրական փորձերից լավագույն էջերը, խմբագրել և գտնելով մի տետրակի մեջ, վերևագրելով «ԶԱՅՆԵՐ»։ Կարելի ասել, որ այ բանաստեղծի առաջին ժողովածուն էր, սեփական ստեղծածի առաջին հանրագումարը։ Ընդհանուրապես ժողովածուները սահմանում են բանաստեղծների ստեղծագործական կյանքի որոշակի էտապները, յորատեսակ հանգրվաններ են երկար ճանապարհի վրա։ Ստեղծագործական օգտակար և անխուսափելի բարսը ներփակվում և կարգավորվում է մի որոշակի շրջանակի մեջ, որպեսզի բանաստեղծ-արարիչը կարողանա ընդհանրացնու մի հայացքով որոշել, թե ինչ է թողնում անցյալին և ինչ վերցնում իր հետ սպասվող ճանապարհի համար։ Ռուբեն Սևակի ստեղծագործությանը բազմանոր ընթերցողը կփաստի, որ նրա համար չափազանց մեծ կարևորություն է ունեցել բանաստեղծական ժողովածուի ներքին կառուցիկությունը, ստեղծագործական տարերքի իմաստավորումն ու զրապումը բանականության հատակ սահմանների մեջ։ Այս առումով Ռ. Սևակը գույք որոշ եզրեր ունենա միայն Վահան Տերյանի հետ։ Ուստի այն հարցին, թե ի՞նչ ճպատակներով էր հավաքում կազմում իր ստեղծին ժողովածուն պատճի բանաստեղծը, կարելի է հավանաբար որոշակիորեն ասել, որ բնավ ոչ հրատարակելու նպատակով։ Սա անցածի քննության պահանջով է արված։ Բացի այդ, կարելի է ենթադրել, որ արվել է նաև որոշ այլ հանգամանքների դրդումով։ բանաստեղծը հրաժեշտ էր տալիս իր ապրած կյանքի որոշակի շրջանին, հրաժեշտ բանաստեղծորեն, նա արդեն բան տարեկան էր, անհրաժեշտ էր այդ տարեկան աշեղ որոշակի արդյունքով, ինչ-որ բան թողնելով։ Խսկ թվերի համեմ, դատելով բանաստեղծի միակ տպագրված ժողովա-

ծուից՝ «Կարմիր գիրք»-ից, նաև ունեցել է որոշ հակում: Այդ ժողովածուն բաժանված է թվական հավասար մասերի: Փաստ, որ դարձյալ վկայում է նրա բանական նկարագիրը:

«Զայներ» ժողովածուն այնունեան, մինչև բանաստեղծի եղերական վախճանմը, պիտի մոռացորջան մատնվեր: Ինքը բանաստեղծը ոչ մի տեղ չի հիշատակում այս ժողովածուի փաստը: Սա ևս մի ավելորդ անգամ վկայում է, որ Ռ. Ալակը այդ ամենը թողել էր անցյալում և լրցորեն չէր նայում իր պատանեկան փորձերին: Անա իշխու «Զայներ» ժողովածուն պիտի մեշտեղից անհետանար, այնունեան Ռ. Ալակի եղբարրդու՝ Հովհաննես Զիլինկիրյանի եռանդուն պրատումների շնորհիվ հայունարերվեր Կանադայում: Այս առջիկ արժե, որ երախտագիտությամբ հիշենք նաև Տորոնտոյում քնակլող նախկին պոլարայ մտավորական, ճարտարապետ Պետրոս Չորյանին և նրա Տիկնոջը՝ Մեդա Չորյանին, որոնց շնորհիվ պահպանվել և մեզ են հասել այս և որիշ աստիպաներ Ռ. Ալակից:

92 Էջանոց այս տեսրակը բացվում է հեղինակի փոքրիկ ներածականով՝ «Խոսք մը» վերնագրի տակ. «ԶԱՅՆԵՐԸ» փոքրիկ մեկ հավաքածուն է արձակ և ոտանակոր այն մի քանի փորձերուն զորս արտադրած ևս ԱՇԱԿԵՐԾԻ շրջանին: Գրական ստացին թոթովումներ են ասունք՝ զո՞ւկ ունէ արժանիքեն թերևս, սակայն, փնտովին օր մը»:

Անա հեղինակի անկեղծ գնահատականը, որը, համոզվեցիմք, որ կեցվածք չէր, այլ իսկապես քննադատական արժուն հայացք: Բանաստեղծի խատապահանջորժունն իր գրական փորձերի հանդեպ, անշուշտ, մի ավելորդ վկայություն է, որ հայ բանաստեղծության անդատանը մի նոր անունով պիտի հարստանար: Մեփական տողերն այսպէս խիստ հայացրով կարող է կարդալ նա, ով վստան է, որ ավելի կարեռ և ավելի բարձրարվեստ ասելիքներ ունի առջևուն: Սակայն քննական այս խիստ հայացքն, ըստ երևույթին, մեզ զրկել է Ռուբեն Ալակի պատանեկան շատուշատ գործերից: Դժվար է հավատալ, թե նա այսքան թիշ բան է գրել իր աշակերտական տարիներին: Բացի այդ, կարելի է վստահորեն ենթադրել, որ այդ տարիներին, ֆրանսերենի և այլ օտար լեզուների ուսումնասիրնան ընթացքում, Ռ. Ալակը կատարել է գրական թարգմանություններ: Ցավոք, դրանք ևս դուրս են մնացել «Զայներ»-ից: Տետրակն ամփոփում է լոկ 1902—1905թթ ընթացքում գրված սեփական գործերը: Ինչպես երևում է, այս ստեղծագործությունները հավաքվել են տարբեր տետրակներից, նշանակում է մի շարք գործեր դուրս են մնացել: Իսկ Ռուբեն Ալակն իսկապե՞ս անաշտ է եղել սեփական գործերի հանդեպ, իսկապե՞ս լավագույն գոր-

ծերն են հավաքված այս տեսրակում: Ավաղ, միայն հրաշք-պատահականությունը կարող է պատասխան տալ այս հարցին: Ինչ վերաբերում է պահպանվածներին, ապա այստեղ զարմացնողը ոչ այնքան բանատեղծական մասն է, որքան երկու ուսումնասիրությունները՝ «Հիսուսի կյանքը» և «Մարդը» ավարտական շարադրությունը, որը ոչ այլ ինչ է, քան սոցիոգիական-փիլիսոփայական մի մի համառոտ ուսումնասիրություն, գրված քանամյա ուսանողի ձեռքով:

## «Հիսուսի կյանքը»

Կասկածից դուրս է, որ թե այս և թե «Մարդը» շարադրությունը ինքնուրույն գործեր չեն և չեն էլ կարող լինել: Երկու դեպքում էլ պատահի հեղինակը պիտի զանազան աղբյուրներ ուսումնասիրեր: Իսկ ինքնուրույնությունը պիտի երևար աղբյուրների օգտագործման եղանակի, հետևությունների և դրանց վրա բարձրացող սեփական մտային կառուցցների մեջ: Այլ խորով, մեզ համար կարևոր է հետևել, թե անգամ ուսումնական հանձնարարությունները կատարելիս որքանո՞վ էր մեջտեղ գալիս ապագա բանաստեղծը, որը չէր կարող իր կնիքը շնել ամեն ինչի վրա:

Այս ուսումնասիրության մեջ նաև մի քանի անգամ շեշտում է, որ հենմել է տարբեր աղբյուրների և հատկապես Էլենատ Ռենանի «Հիսուսի կյանքը» աշխարհահոչակ գրքի վրա: Հիսուսը Ռ. Սևակի պատկերացմամբ, ավելի շատ մարդեղն է, քան աստվածային: Սա չպետք է ընդունել որպես գումիկ մատերիալիզմի դրսուրում: Ռ. Սևակը չնայած այսէիստ էր, բայց հեռու էր մատերիալիզմից և հատկապես դրա գետնաքարշ տեսակից: Եվ մանավանդ, լինել արեիստ երա համար չէր հշանակում ունահարել մյուսների կրոնական զգացումները: «Մարդերգործուն» պոեմում այսպիսի տողեր կան.

**Կիրակի մըն էր. քաղերս ուղենցի**

**Խմ ալսոր մորս հետ եկեղեցի:**

— Պիտի ծիծաղի՞ք, կարծրացած սրտեր.

Կարդացիք Լուքրես, Եպիկուր, Վոլթեր,

Մի քանի որիշ մութ գիրքեր ալ դեռ,

Բայց անհավատի այդ տժգույն թուղթեր

Խրագունք չե՞ն տար որ ամբարտավան

Չեր թունք փշեք՝ կրոնադավան

Հոգվուն ալսոր մոր մը ծերունի,

Որ ապրելու դեռ հազիվ օր մ'ունի,

Որ ծովուն վրա՝ շլուղի մը հման  
Մեկ ոտքը մատուտ, մյուսը գերեզման,  
Գերագոյն, անհաս, անսկիզբ, բարի,  
Մթին Աստուծո մ' անվան կփարի.  
Ու անիրավվա՛ծ, տառապա՛ծ, հուսա՛,  
Մեծ Արդարության վճոին կհուսա...

Ընդհանրապես, եթք ծանոթանում ես բանաստեղծի հետագա շրջանի հաստին գործերին, ապա նկատում ես, որ Հիսուսի մարդեղեն ընկալումը և ընդհանրապես բանաստեղծի աթեկզմը պարզ ազդեցության հետևանք չէին, այլ ծնունդ հայ հասարակական մորի մեջ կատարվող որոշակի խմբումների: Հարցը միայն Հիսուսի աստվածային կամ մարդեղեն սկզբունքը չէր կամ քրիստոնեության դերն ընդհանրապես: Խընդիրը շատ ավելի որոշակի էր դրված. եկեղեցին (ի դեմք քրիստոնեության) և հայ իրականությունը, ազգային-ազատագրական պայքարը: Այս քննական հայացքը, որ նկատվում էր արդեն Շաֆֆու «Կայձեր» ում, չէր կարող վրիպել Ռուբեն Սևակի ուշադրությունից: Մեր ասածի վկայությունն է, թերեւ, «Զարդի խենթը» («Կարմիր գիրքը», 1909թ.) բանաստեղծության մեջ ներկայացված պատկերը. խենթ պատահին (ուղղակի զուգահեռ Շաֆֆու համանուն երկի հետ) իր ուսերին դրած տանում է իր՝ համատակված քահանայի դիակը Կիլիկիո Սիրունի գետը նետելու (այս մասին ավելի մանրամասն տես՝ «Ռուբեն Սևակ. Երկեր. Երևան. 1985 թ. «Սովետական գրող» գրքի էջ 18, Ստ. Թովհյանի առաջանում):

«Հիսուսի կյանքը» հավանաբար գրվել է որպես ուսումնական մանձնարարություն: Գրության ստույգ թվականը նշված չէ, սակայն պետք է ենթադրել, որ սա գրվել է «Մարդը» ավարտական շարադրությունից առաջ, 1904թ.: Արժանին մատուցելով տաղանդավոր աշակերտին, պետք է մասնավորապես խոսել նրա նշանավոր ուսուցիչ մասին՝ մանկավարժ և փիլիսոփա Պերպերյան (1848—1907թք), հիմնադիր նշանավոր Պերպերյան վարժարանի: Ռուբեն Սևակը նրա սիրած աշակերտներից է եղել և նրա խորհուրդով է մեկնել Լոզան ուսանելու: Եվ իսկապես անհնար է չնկատել փիլիսոփա-մանկավարժի մասնակցությունը բանաստեղծի նկարագրի կազմավորմանը, նրա բնատուր տաղանդը հազիվ թե այդպիսի ուժով փայլեր, եթե չիներ մեծ մանկավարժը:

Տերասը վերծանելիս աշխատել ենք անփոփոխ թողնել ինչպես որոշ բառերի գրությունը, այնպես էլ կետադրությունը, ուստի այս և

ჩեმთაგა տხრათხეրოւ «քաՂո», «արձագանգ», «հումանուր» և այլ բառերը կամ «!», բացականչական նշանը և ներկա ուղղագրությունից այլ շեղումներ եթե հանդիպեն, թող չզարմացնեն ընթերցողին: Մեր նպատակն է եղել աճուրիս տեքստի առաջին հրապարակման մեջ պահպանել ինքնագրի ամրողությունը:

## «Մարդը»

Բանատեղծի այս մեկ աճուրիսը, կարծում եմ, առաջին հերթին ստիպում է մտածել, թե արևմտահայ իրականության մեջ կրթությունը ինչպիսի կարեր բնագավառ է համարվել: Եվ հարցը միայն ուսում տալը չէ եղել, այլ սովորեցնել ժամանակի ամենաարդիական գիտելիքները և ամենաառաջադեմ գաղափարները: Ուշադրություն դարձնենք շարադրության նյութին. «Մարդը»: Պերպերյան վարժարանի ավարտական դասարանի աշակերտը փաստորեն ուսումնասիրություն էր գրում օրվա ամենահրատապ խնդրի շուրջ: Ծրջանավարտը միանգամից ուոք էր դնում նոր կազմավորվող գիտության մի ասպարեզ՝ սոցիոլոգիա: Ծիշու է, այս գիտությունն արդեն երեք-չորս տասնամյակի պատմություն ուներ, այնուհանդերձ, թվում է, թե աշակերտի համար պիտի դըժվար լիներ սոցիոլոգիական մի փոքրիկ դիսերտացիա գրել: Այսօրվա աշակերտի համար, թերևս, դժվար լիներ, սակայն ոչ Պերպերյան վարժարանի աշակերտների համար, որոնք ավարտական դասարաններում, իրենց ժամանակի բարձր մակարդակով, եկրոպական մի քանի լեզուներով, սովորում էին գիտական, գրական, առևտրական և մանկավարժական բաժիններում:

Ռուբեն Զիլինկիրյանը, ամենայն հավանականությամբ, ավարտել է գիտական բաժինը, բանգի նույն տարին՝ 1905թ., նա հաջողությամբ կարողացավ ընդունել Լոզանի համալսարանի թժկագիտական բաժինը: Սակայն, ինչպես երևում է, բնական գիտություններին զուգընթաց, վարժարանի այդ բաժնում ուսումնասիրել են նաև հումանիտար առարկաներ:

Դատելով տեքստից, ավարտական շարադրությունները վարժարանում գրվել են մեր համալսարանական ալյարտական դիպլոմների սկզբունքով: Այսինքն, թեման վաղօրոք տրվել է, և աշակերտը ժամանակ է ունեցել նախապատրատություն: Արացուցիչ աղյուրներ ուսումնասիրելու: «Հիսուսի կյանքը»ի մասին խոսելիս, մենք հատուկ ուշադրություն դարձրեցինք հանրածանոր նյութի ինքնուրույն մշակման վրա: Նույնը, գուցե ավելի վստահորեն, կարելի է ասել այս առթիվ:

Խորհուրդ կտայինք կարդալ բանաստեղծի «Մարդեգործյուն» պոեմը և կհամոզվեիք, որ այս շարադրությունը նախապատրաստական մի աստիճան է եղել: Իսկ Այութի ինքնուրույն-ստեղծագործական ընկալումը երևում է հենց շարադրության մեջ: Հիացնում է անթերի կառուցվածքը, Այութի սեղմ, բայց հիմնավոր մատուցումը: Նկատվում է նաև ներքին, մտածված կառուցիկորթյուն, գուապ և տեղին է օգտագործված հարց ու պատասխանի հուետրական հնարանքը, որը երկխոսության պատրանք է ստեղծում, պիտանի դարձնում նաև բարձրաձայն ընթերցման համար: Ըստ երկույթին, աշակերտը պարտավոր էր քևնական հանձնաժողովի առջև բարձրաձայն ընթերցել իր պատրական շարադրությունը:

Ուրիշն Սևակը մարդու եվոլյուցիոն զարգացման մեջ հիմնական դերը հատկացնում է բանականությանը, անվանելով այն «անկորնչելի գորություն»: Սակայն, ինչպես հաստատում է նա, բանականությունը դեռ բավարար չէ մարդու աստիճանական և անդադար զարգացման համար: Միտքը, գիտակցությունը, ԲԱՆը պետք է զորավոր բարոյական հիմքեր ունենան: Եկ այդ հիմքն, ըստ երիտասարդ բանաստեղծի, ՊԱՐՏՔի զգացումն է: Մարդը պարտավորություններ ունի իր անձի, ուրիշների, Աստծո, հասարակության հանդեպ: Պարտքի զգացումը հավերժական բան է, նա չի պարտվում անգամ մարդու մահով. «Պարտք օրորոցեն մինչև գերեզման, ու պա՛րտք գերեզմանեն ալ անդին...»:

Նշենք մի կարևոր բացօղում. ինչպես Կնկատենք բանաստեղծը դեռ չի խոսում հայրենիքի հանդեպ եղած պարտքի մասին: Պատճառը այն չէր միայն, որ 1905թ. դեռևս Արդուլ-Համբիի գահակալության շրջանն էր, և դաման գրաքննության պայմաններում այդ բառը վտանգավոր հետևանքներ կարող էր բերել: Կար մեկ այլ, ավելի լուրջ պատճառ. բանաստեղծը, 1905թ. չափից ավելի մեծ հավասար էր տածում մարդու, հետևաբար հասարակության բանական էլությանը: Պատերազմները և արյունահեղությունները նա դիտում էր որպես անցյալ գիտակցության առավիկումներ: Մարդը նրա համար անշեղորեն դեպի կատարելություն գնացող մի էակ էր, հետևաբար, նրա յուրաքանչյուր հաջորդ բայը արդարության և ճշմարտության ավելի հաստատուն երաշխիքներ էր տալիս: Նշանակում է հայրենիքը վտանգված չէր, քանզի կատարելագործվող մարդն իրենով ծածկում էր ազգայինը: Հայրենիքի գաղափարը ունիվերսալիզմի առջև միշտ մնացել է ստվերում: Տեսական գետնի վրա դա չափազանց հրապորիչ էր և անվտանգ, բայց գործողության մեջ վերածվում էր դժնի ծաղրանկարի: Վկա «Ընկ. Բ. Փանջունի»ն:

Դարսակզբին տարածված սոցիալիստական գաղափարները, ուսուայիստական անխուսափելի շաղախով, մարդուն և մարդկային պահան հասարակությունը տեսնում էին վարդագույն երանգներով: Ծիշու է, արդեն մեջտեղ էին եկել մարդու մոլոր, գաղանային էությունը բացահայտող նոր ուսմունքներ (խոսքը մասնավորապես Զիգմոնդ Ֆրոյդի մասին է), աևկայն սոցիալիստական գաղափարները շատ ավելի զորեղ էին, ավելի տարածված և ավելի վարակիչ: Շորու տարի հետո, 1909թ. ապրիլին, Կիլիկիո ահավոր ջարդերից հետո, քանչորսամյա թիշկ-ու-անող-բանաստեղծ Ռուբեն Սևակը արմատապես պիտի փոխեր իր հայցըները: Բայց մինչ այդ, իր փայլուն շարադրությունն ավարտում էր այսպես: «Տիեզերական եղբայրակցության» մեծ պատվերը՝ դարերու ժըստրին մեջ կորսված՝ իր բոլոր սաստկությամբը լսելի պիտի ըլլա ամենուրեք... Ա՛լ թնդանոթը քար ու քանի չ'պիտի ավերե լուսողոյ քաղաքները, ա՛լ բոցերը չ'պիտի լափիզնեն կյանքով լեցուն երկիրները, ա՛լ գնդակը չ'պիտի շաշե կուրծքերե ներս...»:

1905թ. էր: 20-րդ դարի սկիզբը: Բանաստեղծները շտապում էին մարդուն տեսնել վերջնականապես կատարելագործված: Սակայն, ավա՞ն, ճշմարիտ պիտի լինեին գիտնականները՝ գուշակելով մարդու գաղանային, նողկալի և քստմնելի էությունը: Մարդկության պատմության ամենահամարվոր արյունահեղությունները ուր որ էր պիտի սկսեին:

### «Արցունքու խոսքեր»

Ինչպես ասացինք, Ռուբեն Սևակն իր «Զայներ» առաջին ձեռագիր ժողովածուն պատրաստելիս, նյութերն ամենայն հավանականությամբ հավաքել է տարրեր-տեսրակներից և, անշուշտ, խստիվ ընտրությամբ: Միամիտ պետք է լինել կարծելու համար, թե Պերպերյան վարժարանի բարձր դասարանների աշակերտը, իր մեջ արդեն բանաստեղծն զգացող Ռուբեն Զիլինկիրյանը, ընդամենը այսքան թիշ բանաստեղծություններ գրած լիներ: Ապագա բանաստեղծն իր կյանքի մի որոշակի շրջանի հաշվինսկին էր դնում, ուստի հետագա ճանապարհի համար վերցնում էր միայն «խիստ անհրաժեշտը»:

Սակայն չպետք է կարծել, թե «Արցունքու խոսքեր» վերնագրված բանաստեղծական հրաժեշտն իր արվեստով կարող էր դիմանալ բանաստեղծի ըննական խիստ պայմաններին: Խր արվեստով, իր ասելիքով սա թերևս ամենաանկարեւորն է «Զայներ» տեսրակում: Բայցև պետք է ենթադրել, որ այս երկարաշունչ, գուցեն երկարապատում հրա-

մեշտի արժեքը, բարոյական առումով, հեղինակի համար շատ ավելին է եղել, քան մյուս բոլորի գեղագիտական արժեքը: Անա թե ինչո՞ւ տեղ է գտել մյուս՝ արվեստի առումով ավելի հետաքրքիր գործերի կողքին:

Սուպեմ մեզ փաստացի հայտնի չէ, թե չափածո այս հրաժեշտը ինքնարո՞ւմ է, թե՝ գրված է որոշակի հանձնարարությամբ: Չի բացառվում թե՝ մեկը, թե՝ մյուսը: Հատկապես մյուսը, քանզի այդ տարին Անդրեանված էր ավարտական հանդեսներին հուզումնալից ուսանալորներ կարդալ՝ առ ի երախտագիտություն վարժարանի և ուսուցիչների Անդրեան վաստակի: Կարեորն այն է, որ այս տղերը գրված են անկեղծ գգացումներով: Դա կասկածից դուրս է: Պերպերյան վարժարանը, Արա հոչակավոր հիմնադիր-տնօրենը, մյուս ուսուցիչները, դասընկերները թաճկ և սիրելի պիտի լինեին Ռուբեն Սևակի համար հետագա բոլոր տարիների ընթացքում:

Արցուներու խորերը հատվածաբար մինչև այժմ տպագրվել են երկու անգամ: Սակայն այստեղ Անդրեայացվողը ամբողջական տեքստի առաջին հրապարակումն է:

## «Զոյգ ծառերը»

Անա Ռուբեն Սևակի չորրորդ անտիպն է և մենք դեռ շարունակում ենք խոսել բանատեղի ուսուցչի՝ Ռեթենու Պերպերյանի մասին: Այս ուշադրությունը պատահական չէ: Ռուբեն Սևակն իր ամբողջ կյանքում պիտի ամենասերտ առնչություններն ունենար այս ընտանիքի հետ, սկզբում որպես Ռ. Պերպերյանի աշակերտ, իսկ ավելի ուշ, մինչև իր ողբերգական կյանքի վերջը, իր ուսուցչի օպակաների՝ Շահան և Մանեկի Պերպերյանների ընկերը պիտի լիներ: Զայած կա մի հետաքրքիր մանրամասն. 1914թ., երբ Ռուբեն Սևակը Լոզանի համալսարանի թըլշ-կական բաժինը փայլուն ավարտելուց հետո վերադարձ Պոլիս, թըլշ-կական աշխալու գործունեության հետ մեկտեղ զբաղվում էր նաև մանկավարժության՝ դասավանդելով Պոլսի Կեդրոնական վարժարանում: Մինչդեռ թվում է, թե նա պիտի հրավեր ստանար իր հարազատ վարժարանից:

«Զոյգ ծառերը» այլարանական գեղեցիկ պոեմը, թերևս բալլար որոշակի նպատակներով է գրված. ցավակցել սիրելի ուսուցչին, ինչ-որ չափով մեղմել կորստի ծանր գգացումը: 19-ամյա աշակերտի նըքանկատ քայլը մատուցված է թեկուզ ծանրո դեկորների մեջ, սակայն արվեստով և բանատեղծական ձիրքի որոշակի փայլատակումներով: Սա պատահ ուսանողի բնական պահվածքի արտահայտությունն է. նա արդեն

բանաստեղծորեն էր ապրում և անգամ իր ցավակցությունը որոշակի ձևի և ոճի մեջ էր մատուցում: Աշխարհը, մարդկային հարաբերությունները, ծնունդը և մահը նաև տեսնում էր միայն այս կերպ: Ծեշուում ենք այս հանգամանքը ոչ այնքան պատահի բանաստեղծի անկեղծությունն ապացուցելու, որքան ավելի խորանապու բուն բանաստեղծի ծննդյան որոշ մանրամասների մեջ. Ռուբեն Զիլինկիրյան-Սևակը գալիս էր ոռմանտիկ պոեզիայի դասական ավանդներից: «Ներկայացվող տեքստը՝ իր այլարանական պատկերով (շանթի հարվածից ածխացած կաղնին, մեկ այլ, կանաչ, բայց տրտում կաղնու գրի մեջ) մեզ տանում է ինկապես տասնիներորդ դարի ոռմանտիկականության լավագույն տարիները: Սակայն ճշտենք մի կարևոր բան. բանաստեղծը գալիս էր այնտեղից, որպեսզի գնար ավելի հեռուն:

## «Աշուն»

Աշակերտությունը մեր կյանքի որոշակի շրջանն է: Այդ ընթացքում մեզնից պահանջվում է ոչ միայն գիտելիքներ յուրացնել, տարրական տեղեկություններ կուտակել, որոնք պետք է կիրառենք մեր ամբողջ կյանքում, անկախ մեր ընտրած մասնագիտությունից, այս մշակել ուսումնառության որոշակի սիստեմ, այսինքն՝ արագ, հիմնովին և վերջնական յուրացնել այդ ամենը, որպեսզի մեր մեջ հաղթահարելով աշակերտին, աճեցնենք ու զորացնենք ստեղծագործողը, արարողը: Ուսումնառության այս սեղմ և խորացված ընթացքը չափազանց կարևոր է հատկապես գրողների և արվեստագետների համար, և վայ ճրան, ով ամբողջ կյանքում աշակերտ է մնում:

Դատելով ներկայացվող բանաստեղծություններից, Ռուբեն Սևակն իր աշակերտական շրջանն անցել է ուսումնառության դասական կանոններով. սեփական ստեղծելու համար նախ պետք է հիմնովին յուրացնես վարպետների ստեղծածը: Անա երեք բանաստեղծություն, դարձյալ բալադային տեսակի, հուգական-պատմողական որոշակի տարրերով: Սրանցից երկուսը («Աշուն» և «Քրոջ դամբանին առջև») անձնական ապրումների արտահայտություններ են, սակայն դասական ոռմանտիզմի շրջանակների մեջ: Տառապանքների մեջ ընկած բանաստեղծ-սուրյակութի ծանր ապրումների զուգահեռներն ենք տեսնում աշնան տխոր մեղեղիների մեջ, նոյնանում են հեղինակ-քնարական հերոսի արցունքները և բնությանը «լացը» անձրևը: Երրորդը՝ «Ման Ալարիկա», շատ հնարավոր է, որ ընդորինակված լինի անցյալ դարի որևէ ոռմանտիկ բանաստեղծից կամ որևէ վիպական ֆարուղայից: Դա

սովորական երկույթ էր ոռմանտիկ բանաստեղծների համար. պատկերները, սյուժեները, կերպարները բոշում էին հեղինակից հեղինակ:

Փոխադրություն է սա, թե ոչ, սակայն հաստատում է մի կարևոր բան. տասնինամյա բանաստեղծն շտապում էր տասնիներորդ դարից անցնել բաներորդ, ուստի բարեխմնորեն, ես կատե՛մ ատեղծագործական ուշիմությամբ յորացնում էր այն ամենը, ինչ թողել էր նրան անցած դարը, նա զգում էր, որ ասելիք ունի այս դարի համար: Տիրոջ ձայնն էր լսում ներսից՝ իր մասնավոր լուսան մոցնել ընդհանուրի մեջ, սկսվող դարից նա մեծ սպասելիքներ ուներ:

### «Պանդուխտ պատաճի մահը»

Ինչպես նախորդ երեք բանաստեղծություններում, այսուղև ևս համփարածանի տրամադրություններ են. բանաստեղծն անցյալին նրածնշու է տախու մի տեսակ չափից ավելի հոգական, կարելի է ասել՝ արցունքուն տրամադրությամբ: Գուցե, ինքնին, քերթվածներին առիթ տրվող դեպքերն էին արցունքաբեր (հարազատների կորուս, որ զգայուն հոգու տեր պատաճին պիտի ծանր ընդուներ), սակայն, ինչպես միշտ, ավարտին հասած գրական դպրոցների ընօրինակումները երբեմն ծայրահեղության են հասցնում այդ նույն դպրոցին բնորոշ կողմերը: Ումանափակը մեր տպավորությունների մեջ մնացել է որպես տխոր ապրումների, վեճ իդակների կործանման պատճառով ծնված ողբի և հեծեծանքների, ցավի և ափսոսանքի բանաստեղծական արտահայտություն: Այդ տրամադրություններն ավելի շեշտված են հատկապես ֆրանչական ոռմանտիկների (Լամարտին, Մյուսս, որ Վինչի) բանաստեղծություններում: Ավելին, իրականությունը երբեմն մոդելավորվում էր ըստ ոռմանտիկների բերած անկումային տրամադրությունների: Դա իսկապես հասուկ էր տասնիներորդ դարի համար:

Ուրեմն Զիլինկիրյանի առջև, որպես քերթության անցած դպրոցների աշակերտի, դրվագ էր ընդամենը մեկ խնդիր՝ հիմնովին յուրացնելով, անցյալում թողնել այդ ամենը: Եվ նա փայլուն է կատարում իր առջև դրվագ խնդիրը: «Պանդուխտ պատաճի մահը» բալլարդում ոռմանտիկականության բոլոր բաղադրիչները կան: Տպավորիչ է հատկապես մահիվան այցելությունը ծեր մոր կերպարանքով: Աս արդեն, կարելի է վստահորեն ասել, բանաստեղծական գյուտ է: Ավելին, սա ինը՝ բանաստեղծն է, իր ապագայի աշխարհայացքով: Նրա հասու շոշանի ատեղծագործություններում մահը պիտի ներկայանար կանքի կերպարանքով: «Ստիճարը» բանաստեղծության մեջ, կանացի կուրծքը՝

մայրության և կյանքի հավերժական խորհրդանիշը, խորհրդանշվում է որպես մահվան ակտոնք: Կյանք տվողը մահ է տալիս, իսկ այս երկուսի միջև սերն է, որ «զորավոր է հանց մահը»: Ավելին չխորանալով բանաստեղծական այս գյուտի մեջ, շեշտենք ամենակարևորը. այն, ինչ բանաստեղծության արևելահայ հատվածում հապաղելով հասավ մինչև քանի երրորդ դարի առաջին և երկրորդ քառորդ, արևմտահայ հատվածում, դեռևս դարակզբին, հաղթահարվեց միանգամից, գրական ուսումնառության շրջանուն: Արևմտահայ բանաստեղծները (Ռուբեն Սևակ, Միամանթօն, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիթյան) թոթափելով այն ամենն, ինչ անցյալ դարինն էր, մեր ազգային գեղարվեստական մտածողությունը տանում էին դեպի քանի երրորդ դարի ամենաեռուն պղպտումները: Միևնույն բանն արևելահայ հատվածում անում էր Վահան Տերյանը, և գուցե ավելի խորը և հիմնովին, քանզի նա արմատապես նորոգեց բուն բանաստեղծությունը՝ լեզուն, գրական հայերենը:

Տարօրինակ մի զուգայիպությամբ է, որ այս տեսրակներն այսօր ներկայանում են ընթերցողների դասին: Մոտ իննուն տարի առաջ Պետրովյան վարժարանի շրջանավարտ Ռուբեն Չիլինկիրյանը, իր ստեղծագործական հաշվետիվակը դնելով իրեն նախորդած դարի տակ, հույս էր հայտնում, թե իր գրական առաջին փորձները գուցե «փնտովին օր մը...»: Բանաստեղծը չափազանց համեստ կարծիք ուներ իր մասին: Իննուն տարի անց աշակերտական տեսրակների պահպանված այս էջերը մեծ արժեք են ներկայացնում մեզ համար: Սա հարցի մի կողմն է: Ժամանակն արդեն պատասխանել է այս հարցին՝ պատմական-գեղարվեստական արժեք ավելացնելով պատահի քերթողի փորձերին:

Ավելի դժվար է պատասխան գտնել հարցի մյուս կողմին, որը կանգնել է մեր առջև. յուրատեսակ հաշվետիվակի ենք պատրաստվում նաև մենք: Մենք բոլորս միասին պիտի վերջակետ դնենք այս սովորական դաշտին, և այն փորձը, որ պիտի հանենք դարի ողբերգական ծալքերից, կարո՞ղ ենք պատամի բանաստեղծի պես ասել, թե գուցե «փնտովի օր մը» ապագայի մարդկանց կողմից...


## Ալեքսանդր Թոփչյան



ՏԻԿԻՆ ՅԱԼՆԻ ՍԵՎԱԿԻ  
ԶԱՎԱԿԱՆԵՐԻ ՇԱՄԻՐԱՄԻ ԵՎ  
ԼԵՎՈՆԻ ՀԵՏ



1920 թ. Փ. ՓԱՐԻԶ. ՏԻԿԻՆ  
ՅԱԼՆԻ ՍԵՎԱԿԻ ՇԱՄԻՐԱՄ  
ԵՎ ԼԵՎՈՆ  
ՍԵՎԱԿԱՆԵՐԻ ՀԵՏ




ԼԵՎՈՆԻ ԵՎ ՇԱՄԻՐԱՄԻ 1980 թ., ՆԻԶԱԱ.



Ռ. Սեղման, ՖրանՏիՄոնս



Ռ. Սեղման, Բեթշանինեն  
ԳԻՄԱՆԿՈՐԸ



Ռ. Սեղման, Վարդար  
ՀՅՈՒԹՈՅԻ ԳԻՄԱՆԿՈՐԸ



ԱՐԻԵԼԻ ՍԵՎԱԿԻ



ՏԻԿԻ ՅԱՆԵԼ ՍԵՎԱԿԻ  
ԶԱՎԱՐԱՆԵՐԻ ՀԵՏ



Ռ. Սեղոն, 1920թ., 1910 թ.



Ռ. Սեղոն, 1920թ., 1911 թ.



ԿԱՐԵՒՏՈՒՄ ՀԵՏ

## ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

Անտիպ Էջեր

Կազմ. Ալեքսանդր Թոփչյան

### ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
Հիսուսի կյանքը	5
Մարդը	17
Արց Ծրոտ խոսքեր	27
Կազմողի կողմից	49

Հանձնված է շարվածքի 23.10.1992 թ.:

Ստորագրված է տպագրության 24.11. 1992 թ.:

Զափսը՝ 60×84 1/16: Թուղթը տպագրական: Պատվեր 1005: Տպաքանակ 5000: Գիճը պայմանագրային:

ՀՀ. Կառավարության առընթեր մամուլի վարչության թիվ 1 տպարան, Երևան-10,  
Հանրապետության 65:





1905 թվականին,  
Սկյուտարի Պերպերյան  
վարժարանի քանամյա  
շրջանավարտ Ռուբեն  
Զիլինկիրյանը, որ 1908 թ.  
սկսած պիտի հանդես գար  
Ռուբեն Ալեք  
ծածկանունով, հավաքել է  
լավագույն էջերը,  
խմբագրել և զետեղել մի  
տետրակի մեջ,  
վերնագրելով՝ «ԶԱՅՆԵՐ»:  
Կարելի է ասել, որ սա  
բանաստեղծի առաջին  
ժողովածուն էր, սեփական  
ստեղծածի առաջին  
հանրագումարը: